Azg Ազգ

28 ՄԱՐՏ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 47(5130)

ISSN: 1829-1651

Դարձել ենք փոստատար

Լրագրողներս դարձել ենք Ռաֆֆի Հովհաննիսյանի եւ նախագահ Սարգսյանի ԶԼՄ-ական փոստատարը եւ ամեն օր գրում ենք, թե ով ում ինչ նամակ գրեց, ի՞նչ բովանդակությանբ, ով ինչ պատասխանեց, այդ պատասխանին ի՞նչ պատասխան է տրվելու: Իսկական սերիալ, մենք էլ՝ սերիալի հերոս, բայց որ ավելի է համապատասխանում իրականությանը՝ իսկական լրատվական փոստատարներ ենք դարձել լրագրողներով: Գոնե մեջը մի բան լիներ: Այսինքն՝ սխալ չհասկանաք, հանգուցալուծում: Ջնայած հնարավոր է, որ ոչ մի կողմին հանգուցալուծումն էնքան էլ պետք չէ: Գործընթացը միայն: Բայց մի բան որ ռետինի պես ձգվում է, կարող է հոգնեցնել, հոգնեցնելը դեռ շատ կարգին բառ ասացինք: *Տես էջ 2*



Ռաֆֆին փաստորեն պարտությանն կոչ է անում իշխանությանը

Ռաֆֆի Հովհաննիսյանն արդեն որերորդ անգամ Ազատության հրապարակում անցկացվող ասուլիսներում խոսում է այն մասին, որ, եթե իշխանություններն «անկեղծ լինեին», կբավարարեին իր պահանջն ու կբացեին 120 տեղամասերի պարկերը: Այս թեմայի վերաբերյալ պարզաբանումներ տվել են թե՛ պաշտոնական մարմինները, թե՛ իշխանության ներկայացուցիչները եւ թե՛ մասնագետները: Անգամ լրատվամիջոցներն են մի քանի անդրադարձ կատարել խնդրին: Բայց նախօրեին կայացած ասուլիսում պարոն Հովհաննիսյանը կրկին բարձրացրեց թեման՝ իշխանությանը կրկին կոչ անելով բացել բոլոր կամ որոշ տեղամասերի քվեատուփերը:

Խնդիրն այն է, որ քննարկվող հարցն օրենսդրության մակարդակում սպառիչ լուծում ունի: Ընտրական օրենսգրքով նախատեսված են կոնկրետ գործիքներ, մասնավորապես՝ վերահաշվարկն ու քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումը: Դրանցից առնվազն մեկի՝ վերահաշվարկի ինստիտուտին դիմելը Ռաֆֆի Հովհաննիսյանին եւ մյուս բոլորին հնարավորություն կտար բացել պարկերը, ընդհուպ հանրաքվեի բոլոր տեղամասերում: Բայց այդ գործիքից պարոն Հովհաննիսյանը չի օգտվել: Երեկ նա բացատրեց, որ այդ «տեխնիկական սխալը» անփորձության հետեւանք է: Իսկ ինչո՞ւմն է «անփորձությունը»:

Ընտրական օրենսգիրքը նման դիմումներ ներկայացնելու շատ հստակ ընթացակարգ ու խիստ ժամկետ է սահմանում: Այսպես օրինակ՝ վերահաշվարկի համար կարելի է դիմել քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչեւ ժամը 18:00:

Տես էջ 2

«Պետությունը ձեռքերը լվանո՞ւմ է Գյումրու անօթեւանության խնդրից»

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Այս տարի կբոլորի 1988 թ. ավերիչ երկրաշարժի 25-ամյակը, բայց աղետի գոտին, անցած ժամանակամիջոցում կատարված ընդհանուր առմամբ մեծածավալ աշխատանքով հանդերձ, դեռ լիարժեք վերականգնված չէ: Գյումրու համայնքային ավագանին անցյալ տարվա դեկտեմբերին ընդունել եւ ընթացիկ տարվա հունվարին այս խնդրի հետ կապված ուղերձով դիմել էր ՀՀ կառավարությանն ու վարչապետ Տիգրան Սարգսյանին, նկատելով, որ տարբեր տվյալներով, Գյումրիում դեռ երկրաշարժից անօթեւան է եւ տնակներում է ապրում ավելի քան 2.700 ընտանիք (աճած եւ կիսված անօթեւան ընտանիքներ - մոտ 2000, բնակարաններ կորցրած եւ չհաշվառված ընտանիքներ - մոտ 400, սեփական տներ կորցրած ընտանիքներ - մոտ 300), իսկ այլ պատճառներով անօթեւան ընտանիքների թիվը քաղաքում 1.600-ից ավելի է (տնակներում ապրող ներգաղթյալներ, սոցիալական պատճառներով բնակարաններն օտարած ընտանիքներ եւ այլն):

Անօթեւանության խնդիրը վերջնականապես կարգավորելու, մարդկանց տնակային անտանելի պայմաններից հանելու եւ քաղաքը տնակներից հիմնավորապես ազատելու համար ուղերձում կոչ էր արվում պետության ուշադրության կենտրոնում պահել երկրաշարժից անօթեւան հիշյալ ընտանիքներին, հատուկ պետական ծրագիր մշակել եւ նրանց բոլորին պատշաճ կերպով հաշվառել ու առաջիկա երեք տարում ապահովել բնակարաններով ըստ ընտանիքի անդամների փաստացի թվի, պետության կողմից փոխհատուցման ենթակա ճանաչելով երկրաշարժից անօթեւան դարձած, հետագայում աճած եւ կիսված ընտանիքների այն մասերին, որոնք մնացել են ապրելու տնակներում: Առաջարկվում էր ծրագիր մշակել եւ իրականացնել անօթեւանության պայմաններում ապրող նաեւ մյուս ընտանիքների խնդրի որոշակի լուծման համար, անօթեւանության հիմնախնդրի հետագա խորացման կանխման համար նշվում էին դրա կարգավորման այլընտրանքային տարբերակներ եւս:

Օրերս ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանը հանրապետության վարչապետի 2013 թ. մարտի 4-ի հանձնարարությամբ պատասխանել է ուղերձին: Միայն քաղաքապետ Սամվել Բալասանյանին հասցեագրված պատասխանում, որը հրապարակել է Գյումրիում երկրաշարժից անօթեւան ընտանիքների խնդիրներով զբաղվող «Շիրակ կենտրոնը», ասվում է. «Ուղերձում նշված, Գյումրի քաղաքում տարբեր պատճառներով անօթեւանի կարգավիճակում հայտնված ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման խնդիրն առկա է նաեւ հանրապետության այլ բնակավայրերում: Ընդ որում, հաշվի առնելով բնակարանային պայմանների ու աղքատության կարգը՝ խնդիրն առանձնացված է ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» եւ ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման նպատակների» տեսանկյունից»... Նշվում է, թե ըստ փորձագիտական գնահատականների հանրապետության բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն մոտ 60 հազար ընտանիք, որոնցից անօթեւանի կարգավիճակում են (բնակվում են տնակներում կամ այլ ժամանակավոր կացարաններում) մոտ 30 հազարը: Կառավարության դիրքորոշումն է՝ Գյումրի քաղաքում տարբեր պատճառներով անօթեւան մնացած մոտ 4300 ընտանիքների (ուղերձի համաձայն) բնակարանային պայմանների բարելավման հարցի քննարկմանն անդրադառնալ հանրապետությունում առկա նմանատիպ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի շրջանակներում, ներկայումս աղետի գոտու երկրաշարժից անօթեւան եւ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների համար պետական աջակցությամբ իրականացման փուլում գտնվող բնակապահովման ծրագրի ավարտից հետո:

Տես էջ 8

Չորս տարվա ազատազրկում Սեւակ Շահինին սպանողին

Թուրքահայ ժամկետային զինծառայող Սեւակ Շահինն սպանվել էր Բաթմանի զորամասում 2011-ի ապրիլի 24-ին: Սպանողը նույն զորամասում ծառայող շարքային Քըվանչ Աղաօղլուն էր: Քանի որ դա Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության արձագանքն էր, ուստի ձեւակերպվեց «պատահական կրակոցի հետեւանք», որպեսզի կալանքը որպես խափանման միջոց չկիրառվի մարդասպանի նկատմամբ:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների միության, մարդասիրական կազմակերպությունների եւ մի շարք թուրք մտավորականների հետեւողական հակազդեցությունը ստիպեց թուրքական դատական իշխանություններին վերաքննել Սեւակ Շահինի սպանության գործը:

Դատական վերջին նիստը գումարվել է մարտի 26-ին Դիարբեքիրի ռազմական ատյանում: Այնտեղ ներկա են եղել Սեւակ Շահինի ծնողներն ու ենթասպա Սադեթդին Էրսոզը, որը մեղադրվում էր դիրքը չարաշահելու եւ սպանության ականատեսներին, որոնք իր ենթակայության տակ են եղել, ուղղորդելու մեջ:

Էրսոզը մերժել է հարուցված մեղադրանքը, իսկ զինվորական դատախազը եզրակացրել, որ սպանության դիտավորությունը հաստատող փաստեր չկան, ուստի անփութությամբ սպանության պատճառ դառնալու, ինչպես նաեւ դիրքը չարաշահելու համար 2-6 տարվա ազատազրկում է պահանջել մարդասպան Աղաօղլուի եւ ենթասպա Էրսոզի նկատմամբ:

Ռազմական ատյանը, քննելով դատախազի պահանջը, «անփութորեն մարդ սպանելու» համար 4 տարի 5 ամիս ազատազրկման է դատապարտել Աղաօղլուին: Նշելով դա՝ թուրքական NTV-ին լռում է ենթասպա Էրսոզի մասին: Ենթադրվում է, որ վերջինն ազատ է արձակվել:

Հ. Ջ.

Երեք օր սահմանում

Չինարի. «Պատերազմը չի ավարտվել, ես տեսնում եմ պատերազմը»

Պատերազմը Չինարում սկսվեց 1990-ին: Գյուղը տասնմեկ զոհ տվեց: Գիտեին՝ հանուն ինչի են կռվում ու իրենց պայքարի նշանակությունը որքան կենսական է: Այստեղ ոչ թե Ղարաբաղի պաշտպանության կամ ազատագրման հարց էր դրված, այլ առաջնահերթը սեփական գյուղի ու տան պաշտպանությունն էր: Այդ տարիներին գյուղում բոլորն էին զինվոր, տուն չկար, որտեղ պատերազմը չէր թակել դուռը, որտեղ զոհեր կամ վիրավորներ չեն տեսել:

1992-ի դեկտեմբերի 29-ին Տավուշի մարզի ամբողջ տարածքով լայնամասշտաբ հարձակում էր: Չորս ուղղությամբ կրակում էին Չինարիի վրա: Թշնամին մի քանի ջոկատներով գյուղին էր մոտենում: Այդ ժամանակ ութ եւ տասնմեկ տարեկան Անդրանիկ եւ Ալիկ Պետրոսյանները գնացել էին դաշտ՝ նաղաստակ որսալու: Վերադարձի ճանապարհին նրանք նկատում են ադրբեջանցի զինվորներին, ովքեր սկսում են երեխաների հետ զրուցել: Լուրը տարածվում է, որ թուրքերը մտնում են գյուղ: Այդ ժամանակ Չինարին ընդամենը 28 ավտոմատ ուներ, սակայն գյուղացիները ճիշտ դիրք ընդունելով, կարողանում են թվաքանակով կրկնակի շատ թշնամուն հաղթել ու պաշտպանել գյուղը: Ականատեսները պատմում են, որ այդ օրը ադրբեջանցիները խուճապի մատնվեցին: Դա չի կարելի նույնացնել զինվորական կարգով նահանջի հետ, դա խուճապ էր, սարսափ, որովհետեւ թշնամին համոզված էր, որ չինարցին շուտ է հանձնվելու: Փոխհրաձգության ժամանակ Անդրանիկն ու Ալիկը զոհվեցին: Կրակել էին թիկունքից, երբ երեխաները վազել էին դեպի տուն: Ամբողջ գիշերը գյուղը ռմբակոծվել է: Այդ օրը հայկական կողմը վեց զոհ տվեց. տասնյակ վիրավորներ ու նյութական հսկայական վնաս, սակայն Չինարին չընկրկեց: Երկու օր անց՝ ամանորյա գիշերը սկսվեց հրետակոծությունը, եւ Չինարին ապրեց դժվարագույն երկու շաբաթ: Ութ հենակետերից մի քանի տանկով, ականանետով ու թնդանոթով էին կրակում, սակայն այս անգամ էլ գյուղը դիմակայեց ու դիմացավ: Սա պատմություն է, որ գրեթե բոլորն անգիր գիտեն: Սա խաղաղության հաստատման պատմություն է, խաղաղություն, որ հաստատվեց թղթի վրա, բայց ոչ երբեք Չինարիում: Այսօր էլ Չինարիում պատերազմը շարունակվում է: Սահմանամերձ այս բնակավայրում շաբաթական մի քանի անգամ լսվում են կրակոցներ, բնակիչներն արդեն սովորել են, խուճապի չեն մատնվում: Նրանք թաքնվում են նկուղում, ու կրակոցների ավարտից մեկ ժամ անց կյանքը վերադառնում է նույն հունին:

Տես էջ 4

Սեւանա լճի մակարդակը շարունակելու է բարձրանալ

Սեւանա լճի հեռանկարային ծրագրերի օրենքի համաձայն՝ սահմանված է, որ 2002-2030 թվականի ընթացքում Սեւանի ջրի մակարդակը բարձրացվի 6 մետրով կամ յուրաքանչյուր տարի բարձրացվի 21,6 սմ-ով:

Հայաստանի նախագահին առընթեր Սեւանա լճի խնդիրների հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Մովսիսյանը նշում է, որ Սեւանա լճի առնչությամբ առկա է եռամիասնության խնդիր, որի 3 բաղադրիչները պետք է կատարվեն զուգահեռաբար , դրանք են՝ ջրի մակարդակի բարձրացումը, մաքուր ջրի ապահովումը եւ կենսաբազմազանության վերականգնումը: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Վլադիմիր Մովսիսյանն անդրադարձավ երեք բաղադրիչներին էլ: Նա նախ հերքեց լուրերն ու խոսակցությունները, թե իբր Սեւանի ջրի մակարդակն այլեւս չի բարձրացվելու: «Պատշաճաղես հայտարարում եմ, որ լճի մակարդակի բարձրացումը շարունակվելու է, եւ դա ազգային գերխնդիր է», ավելացրեց Վլադիմիր Մովսիսյանը, ըստ որի՝ լճի մակարդակը 6 մետրով բարձրացնելուց հետո կունենանք 42 միլիարդ խորանարդ մետր ջուր, որը կլինի ջրի ռազմավարական պաշար Հայաստանի համար, եւ դրանով մեր ջրօգտագործողներին ապահովելուց բացի՝ կարող ենք նաեւ արտահանել ջրատարներով:

2013-ի հունվարի 1-ից առ այսօր Սեւանի մակարդակը բարձրացել է 8 սմ-ով, իսկ անցյալ տարի նույն ժամանակահատվածում բարձրացել էր 9 սանտիմետրով, եւ երկու դեպքում էլ նույն ժամանակահատվածում Սեւանից ջուր չի վերցվել:

Այսօրվա դրությամբ ջրի մակարդակը կազմում է 1900 մետր 18 սանտիմետր: Վլադիմիր Մովսիսյանը պաշտոնապես նաեւ հայտարարեց, որ ապրիլի 4-ից Կեչուտի ջրամբարից կսկսվի ջրի տեղափոխումը դեպի Սեւանա լիճ: Ըստ բանախոսի՝ ոչինչ չի խանգարում, որ լճի մակարդակը բարձրացվի ավելի շատ, սակայն կբարձրացվի մինչեւ 1903 մետր 50 սմ բարձրությունը. «Իսկ մնացածն արդեն կթողնենք հետագա սերունդներին»:

Սակայն ջրի բարձրացումը եթե չզուգահեռվի մաքուր ջուր ապահովելու գործընթացով, ապա ապականված ջուր ունենալը ոչ մի առավելություն մեզ չի տա: Հետեւաբար կատարվելու են մաքրման աշխատանքներ: Սեւան թափվող 28 գետերն էլ ապականված են, ու գետերի հունները պետք է մաքրվեն: Մեկ այլ խնդիր է, ըստ Վլադիմիր Մովսիսյանի, արտեզյան հորերի չորացումը, այսօրվա դրությամբ՝ 122 արտեզյան հոր չորացել են: Եվ առաջնային խնդիրը,

որին կբախվեն Սեւանի հեռանկարային ծրագրերն իրականացնելիս, 4717 շենք-շինությունների ապամոնտաժումն է:

Վ. Մովսիսյանը ընդգծեց՝ եթե հարցին մոտենանք օրենքով, ապա 4717 շենք-շինությունները, ընդհանուր առմամբ, ապօրինի են: Այդ շինություններից առայժմ միայն 451-ն են ապամոնտաժված, 177 շինություններ էլ գտնվում են 1900 մետր 25 սմ-ից ցածր մակարդակի վրա ու այս տարի կարող են ջրածածկ լինել: Բանախոսը հավելեց, որ անկախ փաստից, թե ում են պատկանում այդ շինությունները, եթե 1903 մետր 50 սմ մակարդակից ցածր են կառուցված, ապա պետք է ապամոնտաժվեն: Ջրի տակ կմնան նաեւ շուրջ 4000 հեկտար անտառներ ու թփուտներ:

Ինչ վերաբերում է 3-րդ՝ կենսաբազմազանության բաղադրիչին, ապա Վլադիմիր Մովսիսյանը շեշտեց, որ նվազել են իշխանի էնդեմիկ տեսակների բոլոր պաշարները, այդ տեսակները գրանցված են Կարմիր գրքում: Գոյություն ունի էնդեմիկ պաշարների բազմացման երկու ճանապարհ՝ բնական ու արհեստական, հիմա արհեստական ճանապարհի մասով տարվում են աշխատանքներ, չնայած Վլադիմիր Մովսիսյանը նշում է, որ հնարավոր չէ անընդհատ զբաղվել պաշարների արհեստական ավելացմամբ, երբ բնական բազմացում չի ընթանում: Բնական բազմացման համար հարկավոր է, որ 8 հիդրոէլեկտրակայանները, որոնցից 3-ը, ի դեպ, կառուցված են բնական հուների վրա, չաշխատեն ձկների ձվադրման ամիսներին՝ ապրիլին, մայիսին ու հունիսին, իսկ եթե աշխատելու են, ապա գոնե պայմաններ ստեղծվեն, որպեսզի դրանք չխանգարեն ձկների ձվադրմանը:

Ի. Պ.

Դարձել ենք փոստատար

1-ին էջից

Ահա երեկ էլ, մինչ Ռաֆֆի Հովհաննիսյանը Ազատության հրապարակում ավելի մանրամասնում էր նախորդ օրն իր արած առաջարկ-նամակի ենթատեքստը, որոշ ժամանակ տարբերությամբ տարածվեց Հայաստանի նախագահի մամլո խոսնակ Արմեն Արզումանյանի արձագանքը՝ Ռաֆֆու մարտի 26-ի նամակին, որտեղ արձանագրված էր երեք հանգամանք. «1. Նախագահ Սերժ Սարգսյանը մշտապես աչքի է ընկել մեծ համբերատարությամբ, եւ նա միշտ կառուցողական է իր քայլերում, 2. Նախագահի՝ ս. թ. մարտի 25-ի նամակում արված առաջարկությունը դեռ շարունակում է մնալ ուժի մեջ, թեեւ հրապարակից հնչող անհիմն վերջնագրերի լեզուն ժամ առ ժամ նվազեցնում է դրա արդիականությունը, 3. Նախագահի հանդիպումները կազմակերպվում են վաղօրոք պլանավորված արարողակարգով, կանխավ ամրագրված ժամերի եւ տեղի են ունենում նախագահական նստավայրում»:

Ո՞վ էր կասկածում՝ այս արձագանքին երեկ ավելի ուշ արձագանքեց Ազատության հրապարակում նստած Ռաֆֆի Հովհաննիսյանը, նշելով, թե ինքը մեկնաբանում է միայն Սերժ Սարգսյանի հայտարարությունները, ու Արզումանյանին, եթե հարմար գտնի, կպատասխանի «Ժառանգություն» կուսակցության մամլո խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը: Ու ավելացրել է, թե իրենց մոտեցումը շատ հստակ է, եւ ոչ թե վերջնագիր, ուղղված է երկրի փրկությանը, թող իր խոսքն իր շահի համար ոչ որ չխեղաթյուրի: «Մեր առաջարկը մնում է ուժի մեջ», ասել է նա՝ տեղի ունեցածը ցավալի հերթական խեղաթյուրումը դիտելով: Լավ, բա սրա վերջն ի՞նչ է լինելու: Ռ. Հովհաննիսյանը էսօր արդեն կարծեմ 19-րդ օրը հաց չի կերել, բա ոնց անենք: Կամ՝ ամեն օր ոնց կարելի է ինչ-որ ֆորում անել Ազատության հրապարակում, որտեղ ինչ ասես, ինչի մասին ասես խոսվում է: Մեկ-մեկ ուզում ես ասել՝ դե , այ մարդիկ, նստեք վերջապես մի սեղանի շուրջը, մի բան որոշեք, թե չէ՝ ամեն ինչ կարող է վերածվել ֆարսի: Ե՛վ Ռաֆֆի Հովհաննիսյանին, ե՛ւ Սերժ Սարգսյանին ակամա ուզում ես հորդորել. այ հեր օրհնածներ, դե մի վերջնականապես հանդիպեք, հա է, չէ է՝ պայմանավորվեք, կամ էլ հակառակը, ասեք՝ ոչ մի բան չի ստացվում, որ մարդիկ էլ իրենց անելիքն իմանան:

Բայց դե՝ ինչ իմանանք...

Իսկ երեկ կեսօրին, մինչ Արմեն Արզումանյանի արձագանքը, Ռաֆֆի Հովհաննիսյանն իր ասուլիսում կրկնել էր, որ Սերժ Սարգսյանին ուղարկված առաջարկները իրենց առաջարկների մեջ նվազագույն շեմն են, եթե այնտեղ եղած կետերից մեկը նախագահ Սարգսյանը հանի՝ պետք է համարժեք բան առաջարկի: Նա նաեւ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման հնարավորության ձեւաչափն էր դիտարկում, նշելով, որ ինքն Ազատության հրապարակում է, ու հրապարակն էլ, Օրերայի շենքն էլ նախագահ Սարգսյանին էլ են պատկանում: Ինքն այնքան դուրս չի գալու հրապարակից, մինչեւ իր պայքարի այս փուլն ավարտվի, ու այս փուլի համար ինքը համալիր առաջարկ է արել, որտեղ առկա է իշխանության եւ ժողովրդի կողմից իշխանություն կիսելու հնարավորություն: Ոչ թե պաշտոններ է խնդրում, այլ նվազագույնը՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ՝ համամասնական ընտրակարգով, 5 մարզպետ՝ իրենց թեկնածուներից, ոլորտային պատասխանատվության սանձնում. «Գործարքներից խոսողներն իրենք են գործարքի մասնակից», ասաց: Եվ նա պատասխանում էր իր առաջարկի շուրջն իշխանության բանակցությանը: Իսկ սահմանադրական պայքարի եւ բանակցելու միջեւ հակասություն տեսնողին էլ ասաց, թե հակասություն չկա, մեկը մյուսին լրացնում են, ուղղակի ժողովուրդը պետք է իշխանության կոմբինացիայի զոհը չդառնա: Եվ ավելացրեց, թե այլեւս կուսակցական պայքար չէ դա, այլ ժողովրդինը, եւ կուսակցությունները պետք է պատասխանեն ժողովրդին:

Մ. Խ.

ՊՊԱՍԵՐՆԵՔ...

«Հնարավոր չէ ասել, թե ինչ չափով է ազդել ծիրանի բերքի վրա ցրտահարությունը»

Գյուղատնտեսության փոխնախարարի խոսքով՝ ազդեցությունը կերեւա 20-25 օր հետո

Եղանակի կտրուկ փոփոխություններով պայմանավորված՝ Արարատյան դաշտում ծիրանի բերքին հասցված հնարավոր վնասներին մեր թերթում անդրադարձել էինք՝ նշելով, որ բերքին պպառնացող վտանգը հավանական է նաեւ հաջորդ գիշերը: Ի վերջո, թե ի՞նչ է տեղի ունեցել ջերմաստիճանի կտրուկ նվազման հետեւանքով անցած գիշերներին եւ ծիրանի բերքի ի՞նչ կորուստների մասին կարող ենք խոսել, որոշեցինք տեղեկանալ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանից, որն անցած օրերին եղել էր Արարատյան դաշտի գյուղերում:

Գյուղատնտեսության փոխնախարարն ասաց, որ ջերմաստիճանի նվազման երկրորդ գիշերն ավելի տաք է եղել, էական փոփոխություններ չեն եղել: «Հիմնականում ինչ եղել է, եղել է առաջին գիշերը, երբ որոշ տեղերում ջերմաստիճանն իջել էր մինչեւ -2, -1 աստիճանի: Արարատի, Արտաշատի, Արմավիրի, Էջմիածնի տարածաշրջանի գյուղերում եղել են վնասներ, բայց ասել, թե դա ինչքանո՞վ կազդի բերքի վրա, հնարավոր չէ: Արտաքնապես երեւում է, որ որոշ ծառերի մի կողմի ծաղիկները վնասվել են, իսկ մյուս կողմինը՝ ոչ: Սակայն հնարավոր չէ իմանալ, թե դա ինչ ազեցություն կունենա պտղի վրա: 20-25 օր հետո, պտղի ձեւավորման գործընթացում կերեւա արդեն, թե ինչպիսին կլինի այն», ասաց Գառնիկ Պետրոսյանը, ավելացնելով, որ, այնուամենայնիվ, եթե այսօրվա ծառերի վրա եղած միլիոնավոր ծաղկաբույլերի 5 տոկոսն էլ բերք դառնա, ապա դա նշանակում է, որ ծառերի ճյուղերը կծկվեն պտուղների ծանրությունից:

Գյուղատնտեսության փոխնախարարը մեկ անգամ եւս շեշտեց, որ խոսքը միայն ծիրանի բերքի հնարավոր վնասի մասին է: Մրգերի եւ բանջարեղենի այլ տեսակների համար նման վտանգ չի եղել:

Ա. Մ.

Ռաֆֆին փաստորեն ապօրինության կոչ է անում...

1-ին էջից

Ըստ որում՝ նման դիմումները ենթակա են պարտադիր ընդունման: Բայց իրականությունն այն է, որ Ռաֆֆի Հովհաննիսյանի շտաբի կողմից եղել է ընդամենը 10 դիմում, ըստ որում՝ ընթացակարգի խախտմամբ:

Նույնը՝ հստակ ընթացակարգն ու խիստ ժամկետները, վերաբերում են նաեւ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուն: Այս դեպքում եւս, թեեւ ներկայացվել են 120 տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու 70 դիմումներ, բայց դրանք պատկան մարմիններին ներկայացվել են ընթացակարգի ու ժամկետների խախտմամբ: Ի դեպ, անվավեր ճանաչելու դիմումն ամենեւին չի ենթադրում պարկերի բացում, քանզի անհրաժեշտ ապացույցների առկայության դեպքում պարկի պարունակությունը որեւէ խնդիր լուծել չի կարող, իսկ ապացույցների բացակայության պարագայում՝ առավել եւս:

Քվեատուփերի բացման մեկ այլ հնարավորություն էլ առկա է Սահմանադրական դատարանում քննության ժամանակ: Ռաֆֆի Հովհաննիսյանի եւ Անդրիաս Ղուկասյանի հայցի քննության ժամանակ դատարանում միջնորդություն եղավ բացել եւ վերահաշվարկել հանարքեության բոլոր 1988 տեղամասերի քվեատուփերը: Դատարանն այս միջնորդությունը չբավարարեց՝ պարզաբանելով ժամանակի սղությունը:

Այսպիսով՝ «պարկերը բացելու» օրինական հնարավորությունները սպառվեցին: Թվում էր՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը, ով պրոֆեսիոնալ իրավաբան է, հասկանալով նշված իրողությունը, ձեռնպահ կմնար խնդրի հետագա քննարկումից: Փոխարենը հասկանալով, որ ինքը որեւէ իրավական հնարավորություն չունի նշվածն իրականացնելու համար, ըստ էության, ապօրինի կոչով դիմում է իշխանությանը:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է Ռաֆֆի Հովհաննիսյանը սեփական անգործությունը «տեխնիկական սխալ» որակում, իսկ դիմացինին հորդորում ապօրինի քայլերի դիմել:

ՌՈՄԻԿ ՍԻԼՎԱՆՅԱՆ

Ցույց Ֆրանսիայում՝ ի նպաստ Ռաֆֆի Հովհաննիսյանի

Ապրիլի 7-ին, ժամը 17-ին Փարիզում՝ Հայաստանի դեսպանատան առջեւ տեղի կունենա ցույց՝ բողոքարկելու մարտի 18-ին տեղի ունեցած ընտրության արդյունքը եւ զորակցելու Ռաֆֆի Հովհաննիսյանին: Երեւանի Ազատության հրապարակից համացանցով ուղիղ կապ կհաստատեն Ֆրանսիա, որպեսզի լսեն Ռաֆֆի Հովհաննիսյանի ելույթը: Ցույցը կազմակերպում է «Հայկական վերածնունդ» կազմակերպությունը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անցուդարձ

Ասողիկ Գեւորգյան. «Պետք է բարությամբ նայել Երեւանին»

Ժուռնալիստների միության նախագահ Ասողիկ Գեւորգյանը Երեւանի ավագանու ՀՀԿ խմբակցության անդամ է: Չնայած կուսակցական չէ, սակայն ՀՀԿ ցուցակում այս անգամ եւս ընդգրկված է. «Ես մի ցանկություն ունեմ, եւ տա Աստված, որ այդ ցանկությունն իրականություն դառնա ու ընտրվի այնպիսի ավագանի, որն ի զորու լինի քաղաքի կառավարմանը նպաստել՝ բերելով խելոք առաջարկություններ, օբյեկտիվ, անկողմնակալ մոտեցումներ, սթափ մտածողություն», «Ազգի» հետ զրույցում ասաց Ա. Գեւորգյանը՝ պատասխանելով մեր մի շարք հարցերի:

- Տարածված կարծիք կա, թե ավագանին այդպես էլ չի դառնում հակակշիռ քաղաքապետին եւ միաձայն հաստատում է քաղաքապետի բոլոր որոշումներն ու առաջարկները:

- Ասեմ, թե ինչու այդպիսի սխալ տպավորություն կա: Քաղաքապետարանի աշխատանքը լուսաբանելու համար հավատարմագրված լրագրողները գալիս եւ ավագանու նիստերին ներկա լինելով՝ իրենց գործը համարում են ավարտված, կամ քաղաքապետարանում հրավիրված ասուլիսներին են ներկա լինում միայն: Մինչդեռ ավագանու իսկական աշխատանքը կատարվում է հանձնաժողովներում: Ոչ մի լրագրող չորս տարվա ընթացքում չի եկել հանձնաժողովի նիստին մասնակցել, որ խորամուխ լինի, թե ինչ հարցեր ենք քննարկում: Ինչո՞ւ եմ այդ մասին ուզում խոսել, որովհետեւ Ձեր հարցի պատասխանը դա է: Հարցերը նախ քննարկվում են հանձնաժողովներում, ընդ որում՝ համակողմանի, շատ շահագրգիռ, ընդհուպ վարչության պետի, քաղաքապետի տեղակալի մասնակցությամբ: Հարցեր են եղել, որ հանձնաժողովի որոշմամբ օրակարգից դուրս են եկել, ու դրանից մամուլը տեղյակ չի եղել: Եթե հարցի առթիվ անհամաձայնություններ կան՝ հանձնաժողովում են լուծվում, կամ հարցը հանվում է, դրա համար էլ արդեն ավագանու նիստում հաճախ համաձայնեցված հարցերն են հասնում, ու բնական է, որ ավագանին միաձայն է քվեարկում: Բայց լինում են նաեւ անհամաձայնություններ հենց ավագանու նիստում:

- Շարունակեմ, օրինակ՝ հարցեր եղան, որ քաղաքացիական հասարակությունն էր բարձրացնում, ավագանին լուռ էր, բայց այդ հարցերը լուծվում էին հասարակական հնչեղություն ստանալուց հետո. Մաշտոցի պողոտայի բուսիկների, «Ծածկած շուկայի» եւ էլի ուրիշ հարցեր: Մի՞թե այդ հարցերը բարձրացնելն ավագանու խնդիրը չէ:

- Լիովին համաձայն եմ: Խնդիրն այն է, որ ոչ Մաշտոցի պուրակի հարցը, ոչ էլ «Ծածկած շուկայի» հարցը ավագանու նիստում չեն քննարկվել, եւ այդ առթիվ համաձայնություն չի տրվել: Հատկապես՝ «Ծածկած շուկան» քանդելու աղմուկը: Բայց հարցուպատասխանի ժամանակ ավագանու անդամները բարձրացրել են այդ հարցերը: Եվ մեզ հավատիացրել են, որ «Ծածկած շուկայի» դեպքում նույն ձեւով Գեորգի Աղաբաբյանի հեղինակած կառույցը պահպանվելու է, որ Երեւանի զարդն էր: Եվ վերջին անգամ նույնպես քաղաքպետի մոտ բարձրացվեց այդ հարցը փետրվարի 19-ին: Մենք այնտեղ սեփականատիրոջ հետ ունենք մի չլուծված հարց, որը նույնպես լուծվելու է՝ վեցերորդ կամարի հարցը (որի վերաբերյալ հիմա քննարկում կա մասնագետների եւ սեփականատիրոջ հետ), եւ ամբողջ «Ծածկած շուկան» լինելու է նույն կերպարանքով, ինչպես նախկինում էր: Այնպես որ՝ ավագանին այդ կառույցի նկատմամբ անտարբեր չի եղել: Ինչ վերաբերում է քանդված ներկա վիճակին՝ այնտեղ պետք է լինի ավտոկայանատեղի, դա չի երեւալու արտաքինից, դա է կառուցվում, քաղաքպետի տեղեկատվությունն այդպես է, իսկ մենք հիմք չունենք իրեն չհավատալու:

- Ավագանու աշխատաոճից, ուրեմն, Ձեր կարծիքով, դժգոհություն չպետք է լինի:

- Ես կարծում եմ, Երեւանին համայնքի կարգավիճակ տալը նոր բան էր՝ ընտրովի լինելու առումով, եւ այն հանգամանքը, որ երկու քաղաքական կուսակցություն՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն են ներկայացված ավագանիում (ՀԱԿ-ն այդպես էլ չեկավ), դա արդեն դրական է: Բայց մենք չունեինք ավագանիով աշխատելու ավանդույթ՝ առաջին փորձն էր: Լավ էր, որ ավագանիում մասնագիտական բարձր որակներ ունեցող մարդիկ կային, որոնք՝ սոցիալական, մշակութային, Երեւանի արտաքին տեսքի առումով հարցերի քննարկումների ժամանակ իրենց մասնագիտական որակները դրսեւորում էին:

Անզեն աչքով նայենք, թե ինչ է կատարվում Երեւանում այս 4 տարվա ընթացքում. Երեւանի բոլոր մուտքերը գեղեցիկ ձեւավորվել են, կյանքի են կոչվել Երեւանին բնորոշ բոլոր շտրվաններն ու ցայտաղբյուրները, շենքերի ֆասադները դեռ առաջին քաղաքապետից սկսած ու հետո էլ՝ մինչեւ այժմ գեղեցկացել, ներկվել, մաքրվել են, արտաքին լուսավորման հրաշալի լուծումներ են գտնվել, էլ չեմ ասում ծաղկազարդման, գեղեցիկ նստարանների մասին: Երեւանը հիմա բարեկարգ եւ բոլորովին ուրիշ տեսք ունի: Բակերի խաղահրապարակներ անցյալում չենք ունեցել: Թեեւ ավագանի չուներ քաղաքը, բայց երբ քաղաքպետ է եղել այս 4 տարվա ընթացքում, նրանցից ոչ մեկը չի բացառել նախկինի աշխատանքը, այլ աշխատել է զարգացնել եւ շարունակել արվածը, արդեն հիմք դրած ավանդույթները:

- Բայց ինչո՞ւ են այդքան քննադատում քաղաքացիական հասարակության միավորները:

- Դա ինձ շատ մտահոգում է, կարծում եմ, որ հասարակությունը մի քիչ խնդիրներ ունի: Փոխանակ ուրախանա եւ ասի՝ իսկ ես ի՞նչ եմ անում, գոնե մաքրածը պահպանո՞ւմ եմ արդյո՞ք հասարակ բան: Երեւանցին ինքը պետք է մասնակից լինի էդ ամենին, չի կարելի կողքի կանգնել ու ասել՝ ի՞նչ են անում, որ... Արտաքին՝ փողոցային առեւտուրը հիշենք, որ վերացրին՝ մեծ աղմուկ առաջացրեց, բայց ճիշտ էր, չէ՞, այդ որոշումը... Մայրաքաղաքի տեսքին անհարիր էր փողոցում փռել սննդամթերք ու կանաչեղեն:

- Երեւանի կանաչ տարածքները շարունակվում են խլվել...

- Երեւանի կանաչ տարածքներն անկախության առաջին տարիներից սկսեցին ոչնչացնել, բայց վերջին տարիներին որքան վերականգնողական աշխատանքներ են կատարվել. նայեք՝ Օղակաձեւ զբոսայգին որքան լավ մաքրվեց առաջին քաղաքպետի ժամանակ, շատ լավ է արել քաղաքպետ Տարոն Մարգարյանը, որ թույլ չի տվել գրավաճառների կրպակներն այնտեղ տեղադրել: Դրա փոխարեն նա առաջարկում է Մաշտոցի պուրակին հարող ստորգետնյա անցումը եւ Ձկան խանութի մոտի ստորգետնյա անցումը՝ քաղաքպետարանի վրա վերցնելով նորոգման բոլոր աշխատանքները: Մի քիչ էլ պետք է մտածել քաղաքի շահերի մասին: Հասկանում եմ, որ Երիտասարդական մետրոյի մոտի ստորգետնյա անցումը հարմար էր գրավաճառների համար: Նաեւ այստեղ սեփականատիրոջ իրավունքն է՝ նա ասում է, որ պետք է նորոգի, տեսքի բերի, իսկ հետո նորից բոլորին կընդունի: Թեեւ չգիտեմ՝ կընդունի, թե՞ չի ընդունի: Դրան ի պատասխան՝ քաղաքպետը մի քանի անգամ զրուցել է գրավաճառների հետ, ես ինքս եմ հարց ուղղել քաղաքպետին, թե գրքի մայրաքաղաք հռչակելուց հետո եւ քաղաքպետարանի՝ այս ուղղությամբ մի շարք փայլուն միջոցառումներից հետո ինչպե՞ս վարվենք գրավաճառների հետ: Ու այո, գիրքը պետք է վաճառվի դրսում, ավելի հասանելի լինի: Քաղաքպետի պատասխանն այն է, որ ինքը եւս մտահոգված է այս հարցով, զրուցել է գրավաճառների հետ, ու նրանց մեծ մասը համաձայնել է Մաշտոցի պուրակի անցումի հատվածում գրքերը վաճառել, որովհետեւ ինքը չի համաձայնել Օղակաձեւ զբոսայգում կրպակներ դնել:

- Ձեր ասած՝ Երիտասարդական մետրոյի դիմաց, ՍԱՍ սուպերմարկետի դիմացի մայթին, փաստորեն նոր խանութ են սարքում: Երբ ՍԱՍ-ը սարքում էին՝ ես մտահոգությամբ մի քանի անգամ գրել եմ, թե այստեղ ոչ պարկինգ կա, ոչ էլ այլ տարածք, որ խանութից գնումների եկող մեքենաները կայանեն, ու դա խանգարելու էր երթեւեկությանը, մոտակա տրանսպորտային կանգառի համար խնդիրներ ստեղծեր: Այդպես էլ եղավ: Հիմա դա քիչ է, դիմաց մայթին են համանման խանութ ստեղծում, էլի պարկինգի հնարավորություն չկա, եւ դեպի Ավան, Նորքի զանգվածներ, Ձեյթուն բարձրացող ճանապարհների այդ հանգույցն ընդհանրապես խեղդվելու է կայանող մեքենաներով: Սա անելու բա՞ն է:

- Ես շատ կուզեի, որ այդ հարցն ուղղեք քաղաքաշինական հանձնաժողովին, այնտեղ այդ հարցի պատասխանները մասնագետները կարող են տալ, ես մասնագետ չեմ: Որովհետեւ ոչ մասնագետները լուրջ-քաղաքաշինական հարցի մասին ավելի շատ են խոսում, քան մասնագետները:

- Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը շուտով կմեկնարկի, ինչպե՞ս եք այն պատկերացնում:

- Գործող ավագանին աշխատեց չորս տարի, ինչ որ արել է՝ այսօրվա Երեւանի դեմքին առկա է: Մենք հիմա պետք է խոսենք՝ ի՞նչ ենք անելու 2013 թվականին: Պարզապես կոչ եմ անում մյուս կուսակցություններին, որոնք պատրաստվում են մասնակցել Երեւանի ավագանու ընտրություններին, պայքարը լինի քաղաքակիրթ, ծրագրերի մասին խոսեն եւ ոչ թե պիտակավորեն մեկը մյուսին, ոչ թե չարախոսեն մեկը մյուսին: Պետք է բարությամբ նայել Երեւանին, եւ ես կոչ եմ անում, որ ՀՀԿ-ն, եւ մյուս կուսակցությունները, որոնք պայքարելու են Երեւանի ավագանում ներկայացված լինելու համար, պայքարի ավելի քաղաքակիթ ձեւեր ընտրեն քարոզարշավի ժամանակ՝ մեկը մյուսին չպիտակավորի:

Մ. Խ.

ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեւանյան գիտաժողովին արձագանքում է Նյու Յորքի Turkishny.com կայքէջը

Մարտի 22-23-ին Երեւանում գումարվեց «Հայոց ցեղասպանություն. Մարտահրավերներ 100-րդ տարելիցից առաջ» թեմայով գիտաժողովը: Մարտի 26-ին գիտաժողովի աշխատանքներին «Հայերը, այսպես կոչված, ցեղասպանության 100-րդ տարելիցի ռազմավարությունն են մշակում» վերնագրով անդրադարձել է Turkishny.com կայքէջը, կարծես վերահաստատելու, որ հայատյացությամբ առավել տառապող լրատվամիջոցներից է Թուրքիայի սահմաններից դուրս:

Կայքէջի հրապարակման մեջ նշվում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձի մասին, մասնաշնչելով նրա հետեւյալ խոսքերը. «Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը Հայաստանի միասնականությունը ցույց տալու պատեհ առիթ է: Թուրք հասարակության խղճի տեր հատվածը ճանդում է լռության եւ ժխտողականության պատը, պահանջում, որ իր երկիրը վերանայի որդեգրած դիրքորոշումը»:

Այնուհետեւ թուրքական կայքէջը շարունակում է. «Մասնակիցներից իսրայելցի պրոֆ. Յահիր Ասրոնը ընդգծեց Իսրայելին, որ առ այսօր չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, հակադրվելով բնակչության ստվար հատվածի կարծիքին: Պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը մտավախություն հայտնեց, որ թուրքական կառավարությունը 100-րդ տարելիցի միջոցառումների հակահարված տալու համար ավելի լուրջ պատրաստություն է տեսնում: Պրոֆ. Վահագ Տատրյանն ավելացրեց. «Թուրքիան չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը, քանի դեռ շարունակում է մնալ հզոր երկիր»:

Գիտաժողովի մեկ այլ մասնակից՝ Ռագըփ Զարաֆոլուն անդրադարձավ Թուրքիայում հետզհետե հզորացող «ժխտողականության ինդուստրիային», նշեց, որ ժխտողականությունը երկրում քաջալերում է ահաբեկչությունը:

Ինչ վերաբերում է Հարութ Սասունյանին, ապա նա անհրաժեշտ համարեց պայքարել ոչ այնքան ցեղասպանության ճանաչման, որքան արդարության վերականգնման համար, ընդգծելով, որ արդարություն հասկացությունը ներառում է Թուրքիայի նկատմամբ հայերի բոլոր պահանջները»:

Հ. Ջ.

Պիտակավորվել են Հաթայի քրիստոնյաները

Հաթայը նախկին Ալեքսանդրետի սանջակն է: Երկրորդ համաշխարհայինի նախօրյակին՝ 1939-ին Ֆրանսիայի թողտվությամբ Սիրիայից տարանջատվել եւ կցվել է Թուրքիայի սահմաններին: Վիլայեթի բնակչությունը խայտաբղետ է, այնտեղ զգալի թիվ են կազմում արաբները, կաթոլիկ եկեղեցու հետնորդ լատինները եւ այլ քրիստոնյաներ, որոնք ի սկզբանե դիտվել են որպես «կասկածելի եւ վնասակար» անձինք: Թերեւս այդ պատճառով էլ Հաթայի նահանգային կենտրոն Անտիոքում 2009-ին սպանվել էր Վատիկանի ներկայացուցիչ Պադովեզ քահանան:

Ինչպես SAT-Turk հեռուստատեսության կայքէջը վկայում է մարտի 26-ին, պարզվել է, որ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հատուկ նշանակության գործողությունների վարչությունը Տարսիզոնից եւ Մալաթիայից հետո պիտակավորել է նաեւ Հաթայի քրիստոնյաներին: Ինչպես հայտնի է, Տարսիզոնում սպանության զոհ էր դարձել կաթոլիկ քահանա Սանտորոն, իսկ Մալաթիայում՝ «Ձիրվե» հրատարակչության 4 աշխատակիցներ:

Ըստ թուրքական հեռուստատեսության, Հաթայում քրիստոնյաների պիտակավորման փաստը բացահայտվել է ընտրիով Ազգային հետախուզական կազմակերպության՝ MIT-ի՝ Թուրքիայի ազգային Մեծ ժողով ներկայացրած վավերագրերում առկա նամակի, որն իրազեկման բնույթ է կրում: Պիտակավորվողները բաժանվել են երկու խմբի՝ «Համագործակցության ենթականեր» եւ «Կասկածելի ու վնասակար անձինք»:

Ցուցակի երկրորդ բաժնում, բացի քրիստոնյաներից, ընդգրկվել են Հաթայի քդերը, ալավիները, արաբները, քրիստոնյաները ներառյալ:

Հ. Ջ.

Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը ժամանել է Լեհաստան

Լեհաստանի Հանրապետության Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի հրավերով Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով ժամանել է Լեհաստան:

Այցի առաջին օրը ԱԱԽ քարտուղարը հանդիպել է Լեհաստանի Սենատի նախագահի Բոգդան Բորուսեւիչի հետ, նրանք քննարկել են երկու երկրների հարաբերություններին վերաբերող հարցեր: Նույն օրը տեղի է ունեցել նաեւ Արթուր Բաղդասարյանի հանդիպումը հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի լեհական կողմի համանախագահ Տոմաշ Տոմչիկեւիչի հետ, վերջիններս քննարկել են Հայաստանի ու Լեհաստանի միջեւ տնտեսական համագործակցության զարգացմանն ու հեռանկարներին վերաբերող հարցեր, կարեւորել երկկողմ տնտեսական համագործակցության ընդլայնումը եւ այդ տեսակետից կարեւորել նաեւ ապրիլի 23-26-ը Երեւանում կայանալիք միջկառավարական հանձնաժողովի հերթական, 3-րդ նիստի անցկացումը:

Ռեպորտաժ

Մանկապարտեզում

Ելենան

Երեք օր սահմանում

Չինարի. «Պատերազմը չի ավարտվել է, ես տեսնում եմ պատերազմը»

1-ին էջից

Այսօր սահմանամերձ Չինարի գյուղում ապրում է 1256 մարդ: Պատերազմից հետո շատերը լքեցին գյուղն ու հաստատվեցին Ռուսաստանում: 78-ամյա տիկին Քնարիկի երկու որդիներն էլ ժամանակին բռնեցին արտագաղթի ճամփան, այսօր որդիներից մեկը Մոսկվայում է, մյուսը՝ Ռոստովում: Մեր այցելության ժամանակ **Քնարիկ** տատիկն այգում վարդեր էր տնկում: Ասում է՝ հետո ինչ, որ կրակում են, բա իմ բակը սիրուն չլինի՞, բա իմ գյուղում ծաղիկներ չլինե՞ն: «Թող տեսնեն, որ մենք ոչ մի տեղ էլ չենք գնում, որ էստեղ ենք: Մեր երեխեքը գնացել են Ռուսաստան աշխատելու, թոռնիկներս էլ վախենում են գյուղ գան, կրակոցները լսում են, սկսում են լաց լինել: Ես նրանց չեմ կարող ստիպել, որ էստեղ ապրեն, ոչ աշխատանք կա, ոչ բան կա, հետո էլ էս կրակոցը, բայց մենք ո՞ւր գնանք, էս մեր հողն ու տունն է: Էս վերջերս շուտ-շուտ կրակում են, դե մենք էլ վախենում ենք, նկուղներում ենք պախկվում», պատմում է Քնարիկ տատիկը:

Որ թշնամին ակտիվացել է հատկապես 2008-ից հետո, փաստում է նաեւ գյուղապետ **Սամվել Սաղոյանը**: «Գիշերային ժամերին հիմնականում կրակում են ԴՇԿ-ից, իսկ ողջ օրվա ընթացքում գյուղացիներին հսկում է դիտակետը: Ամեն վայրկյան լարված սպասում ենք, որ կարող է կրակեն, բոլորն էլ գիտեն իրավիճակը, սակայն քչերն են մտածում հեռանալու մասին», ասում է գյուղապետը՝ հավելելով, որ անգամ փոքրիկները խուճապի չեն մատնվում, քայլում են պատերի տակով. գիտեն՝ մի անզգույշ քայլ, ու ողբերգությունն անխուսափելի է:

Մանկապարտեզը գյուղի ամենավիրավոր կառույցներից է: Մանկապարտեզը գտնվում է հենց ադրբեջանական դիտակետի դիմաց: Դրսից անզեն աչքով էլ նկատելի են գնդակների հետքերը: Երեխաները բակում գրեթե չեն խաղում. վտանգավոր է:

Փառանձեմ Աղասյանը մանկապարտեզի տնօրենն է: Նրա պատուհանից երեւում է թշնամու հենակետը: «Շատ վախենալու է, ամբողջ օրը լարված վիճակում ենք աշխատում: Մենք թիրախում ենք, ու թշնամին էլ գիտի, որ այստեղ երեխաներ են, բայց դա որեւէ նշանակություն չունի, որովհետեւ մանկապարտեզը շատ հաճախ է գնդակոծվում: Պատերի մեջ կան բազմաթիվ չպայթած փամփուշտներ: Մանկապարտեզի ներսում թաքստոց կա: Երեխաներն արդեն սովորել են, առանց խուճապի մատնվելու վազում են թաքստոցը: Արդեն հասկանում են՝ դիմացից կրակում են, ուրեմն պետք է պաշտպանվել», ասում է տիկին Աղասյանը:

Մանկապարտեզում երեխաները ցույց են տալիս, թե որտեղ են թաքնվում, երբ հնչում են կրակոցներ, ու հավելում են՝ թաքնվում ենք, բայց չենք վախենում: «Ի՞նչ երգ գիտես» հարցին մանկապարտեզի շուրջ երեք տասնյակ երեխաները շարք են կանգնում ու սկսում կատարել «Արծիվ, սլացիր» ստեղծագործությունը: Փառանձեմ Աղասյանը հավելում է, որ գյուղում ծնված երեխաների երակներում արդեն եռում է հայրենասիրությունը: «Նրանք մեր ապագան են, նրանց հայրենասիրությունից եւ քաջությունից է կախված Չինարիի հետագա ճակատագիրը»:

57-ամյա **Սամվել Միրզոյանը** 2008-ի հունիսի 18-ի դեպքը շատ լավ է հիշում: «Վերեւում անասուններ էի պահում, իմացա, որ ադրբեջանցիները մի տղայի են խփել, անունը՝ Լեւոն: Իմ տղայիս անունն էլ է Լեւոն: Վախեցա, զանգում եմ տղայիս, հեռախոսը չի պատասխանում: Մի քանի անգամ զանգեցի: Պատասխանեց. «Պապ, ես լավ եմ, բայց մեր հարեւան Լեւոնին են խփել»: Գնացի, որ դիակը բերեմ, մի մետր տեղափոխեցի, ադրբեջանցին մի հատ խփեց, պառկեցի, մի հատ էլ խփեց՝ կողավ ոտքիս: Հետո տղաները եկան օգնության, ինձ տարան հիվանդանոց: Մի քանի ամիս պառկեցի, հիմա փայտով եմ մաս գալիս», ասում է Սամվելն ու հավելում, որ գյուղացին ընդամենը մեկ բան է ցանկանում՝ խաղաղություն: Նա հավելում է, որ չինարցիները հողին, ջրին ու տանը նվիրված մարդիկ են, բայց չեն կարողանում հողագործությամբ զբաղվել, որովհետեւ թշնամին թույլ չի տալիս, ապրում են վախը ուրտում: «Ոչ ապրելու է, ոչ էլ փախչելու: Գյուղացին մնում է, բայց ուզում է, որ վերջը լավ լինի, որ գոնե իր երեխաներն ապահով ապրեն, որ գոնե թոռներն էս ամենի միջով չանցնեն: Մենք ընդամենը մի բան ենք ուզում՝ խաղաղություն, բայց շատ մեծ ու թանկ բան է, ու էս քսան տարի իրականություն չի դառնում», ասում է Սամվելը:

Չինարիի գերեզմանատունը հենց թշնամու սարի լանջին է: Գյուղացիները հիշում են 2008-ի դեկտեմբերը, երբ հուղարկավորության ժամանակ թշնամին սկսեց կրակել: Դրանից հետո գյուղում հուղարկավորությունները գիշերն են կատարում:

Նունե Խոջոյանի բնակարանը թշնամու սահմանից ընդամենը 700 մետր է: Նրա տան պատերն ամբողջությամբ ավերված են, տան փոքրիկ պատուհաններին դրսի կողմից տախտակ է ամրացրել, ներսից մուգ կարմիր վարագույր կախել, որպեսզի լույսը չընկնի, ու թշնամին երեկոյան չկրակի: Թեպետ առանց դրա էլ Նունեի ընտանիքի անդամները հաճախ են կրակոցների թիրախ դառնում: Նախորդ տարի մարտի 8-ին թշնամին կրակել է հենց Նունեի ոտքերին. բարեբախտաբար գնդակը ոտքերին չի դիպել: Տիկին Նունեն պատմում է, որ ուժեղ կրակոցների ժամանակ մի քանի անգամ լքել են տունը, գնացել են հարեւան գյուղ՝ բարեկամների մոտ են ապրել, կրկին հետ են եկել, որովհետեւ հասկացել են՝ տունը, հողը լքել չի կարելի: 17-ամյա **Ելենան** մեզ հետ զրույցի ժամանակ չէր կարողանում զսպել արցունքները: Ասում է՝ հունիսի դեպքերից հետո, երբ գյուղում երկու հոգի մահացավ, շատ վախեցավ: «Դուք ասում եք, որ պատերազմն ավարտվել է, բայց պատերազմը չի ավարտվել, ես լսում եմ կրակոցներ, մեր գյուղացիները վիրավորվում են, զոհվում, անցյալ տարի մայրիկիս վրա էին կրակել, ես վստահ չեմ, որ դպրոց գնալու կամ վերադառնալու ճանապարհն անվտանգ է, յուրաքանչյուր վայրկյան ինձ կամ քույրիկիս վրա կարող են կրակել: Նշանակում է՝ պատերազմը չի ավարտվել, ես տեսնում եմ այդ պատերազմը»:

Փառանձեմ Աղասյան

Նունե Խոջոյան

Սամվել Միրզոյան

Սրանք մարդկային պատմություններ եւ իրական հերոսներ, նրանք ապրում են, աշխատում, ստեղծում ու ամուր կառչած հայրենի հողին՝ փորձում են գոյատեւել. գոյատեւել բառի բուն իմաստով:

Կյանքի վտանգի սպառնալիքով նրանք հերոսաբար դիմակայում եւ ապրում են սահմանամերձ այս բնակավայրում, սակայն պետությունը նրանց չի աջակցում: Կառավարության սահմանած արտոնությունը, որ սահմանամերձ գյուղերն ազատվում են հողի հարկից, ըստ էության որեւէ կերպ չի թեթեւացրել գյուղացու հոգսը: Տասնամյակներ շարունակ այս տարածաշրջանում բնակիչները հիմնականում զբաղվել են խաղողագործությամբ: Այսօր համայնքի շուրջ 1070 հա հողերից միայն 200 հա-ն է մշակվում: Պատճառը դիրքն է, հողատարածքները շատ մոտ են թշնամու հենակետերին եւ պարբերաբար գնդակոծվում են: Գուցե կառավարությունը ուղիներ փնտրի, որպեսզի սահմանամերձ գյուղերի բնակիչներն էլեկտրաէներգիայի, գազի կամ ջրի համար ավելի քիչ վճարեն, քան սակագինն է: Գուցե նախագահը կամ վարչապետը քաղաքաշինության նախարարությանը հանձնարարեն ուսումնասիրել եւ աշխատանքներ սկսել սահմանամերձ գյուղերի ավերված տները վերականգնելու ուղղությամբ: Երբ մենք ասում ենք, որ պետության պաշտպանությունը սկսվում է սահմանից, ապա պետք է պաշտպանենք նախ սահմանում ապրող բնակչին, քիչ թե շատ թեթեւացնենք նրա հոգսերն ու ոչ միայն բառերով, այլեւ գործով ապացուցենք, որ պետությունը մտածում է նրա մասին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Չինարի, Տավուշի մարզ

Հ. Գ. - Տավուշի մարզի սահմանամերձ գյուղեր այցելությունը իրականացել է «Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտի» (IWPR) աջակցությամբ:

Սաակաշվիլին ստորագրեց իր «սահմանափակումը»

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ստորագրել է նախագահի լիազորությունները սահմանափակող սահմանադրական փոփոխությունները, որ երկրի խորհրդարանն ընդունել է մարտի 25-ին: Նախագահի ստորագրման մասին հայտարարել է վրաց խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուպաշվիլին: Նրա խոսքերով՝ անմիջապես ուժի մեջ մտնող սահմանադրական փոփոխություններով «նախագահն արդեն գայթակղություն չի ունենա ոչ ճիշտ մեխանիզմներ կիրառելու»:

«Իշխանությունը կարող է առավել հանգիստ պայմաններում աշխատել, եւ որ կարեւորն է՝ Վրաստանում այլեւս երբեք ոչ ոք չի կարող առանց ընտրությունների փոխել ժողովրդի վստահությունը ստացած կառավարությանը», հայտարարել է վրաց խորհրդարանի խոսնակը:

Սահմանադրական փոփոխությունները հարեւան երկրում նախ ամրագրում են, որ մինչեւ խորհրդարանի կողմից նոր կառավարությանը վստահություն հայտնելը կառավարության պարականությունները կիրականացնի նախորդ կառավարությունը: Ընդ որում, կառավարության հրաժարականի կամ նախագահի կողմից կառավարությունը գրելու դեպքում կառավարման պարտականությունները կկատարի հենց հրաժարական տվող կամ գրվող կառավարությունը մինչեւ նոր կազմի ստեղծումը:

Կառավարության ծրագիրը երեք անգամ չհաստատելու դեպքում նախագահին հնարավորություն է տրվում գրելու խորհրդարանը, բացի այնպիսի բացառիկ իրավիճակներից, որոնք կրկին ամրագրված են երկրի սահմանադրությամբ: Փաստացի այս փոփոխություններով Վրաստանի նախագահին այլեւս լիազորություն չի տրվում խորհրդարանը գրելուց հետո միանձնյա նշանակելու այն կառավարությանը, որի ներկայացրած ծրագիրը խորհրդարանը երեք անգամ մերժում է:

Բացի դրանից՝ նախագահը չի կարող գրել խորհրդարանը նախագահական ընտրություններին նախորդող ամսից մինչեւ նորընտիր նախագահի երդումը:

Այս մոտեցումը ողջունելի են որակել ինչպես Եվրոմիության բարձրաստիճան պաշտոնյաները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Վրաստանի հարցով համազեկուցողները: Իսկ ինքը՝ «սահմանափակվող» նախագահ Սաակաշվիլին Վրաստանի «ժողովրդավարության» համար կարեւոր է որակել այդ փոփոխությունները, ընդգծելով, թե դրանք ապացույց են, որ Վրաստանը «ժամանակակից պետություն է», ընդ որում՝ հաշվի առնելով, որ Սաակաշվիլու թիմակից խորհրդարանական փոքրամասնությունը եւս կողմ է քվեարկել փոփոխություններին:

Սաակաշվիլին այս համաստեքստում չի մոռացել հիշեցնել ներկայիս կառավարության «ահաբեկման ու շանտաժի» մասին, որին **«Ազգը»** եւս անդրադարձել էր՝ ներկայացնելով վարչապետ Բիձինա Իվանիշվիլու վերջնագիրը Սաակաշվիլուն:

Մարտի 25-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց սահմանադրական փոփոխությունները՝ 135 կողմ քվեարկությամբ 147 պատգամավորից:

Վ. Պ.

Արաբական լիգան ստեղծում է Երուսաղեմի աջակցության հիմնադրամ

Երուսաղեմին աջակցելու նպատակով Արաբական պետությունների լիգան ստեղծում է 1 մլրդ դոլարի բյուջեով հիմնադրամ: Վերջինիս խնդիրները կլինեն քաղաքի արաբական եւ իսլամական բնույթի պահպանման նախագծերի ու ծրագրերի ֆինանսավորումը եւ երուսաղեմցիների տոկունության ամրապնդումը, նշվում է Քաթարի մայրաքաղաք Դոհայում անցկացված լիգայի գագաթաժողովի ամփոփիչ հայտարարության մեջ:

Արաբական լիգայի գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի գծով տեղակալ Ահմեդ բեն Հելլիի հրապարակած փաստաթղթում նշվում է, որ Իսլամական համագործակցության կազմակերպության հովանու ներքո ստեղծվող հիմնադրամի կառավարիչը կլինի Զարգացման իսլամական բանկը: Վերջինիս կենտրոնակայանը գտնվում է Սաուդյան Արաբիայի Ջիդդա քաղաքում:

Միջարաբական հանդիպման բացման ժամանակ հիմնադրամ ստեղծելու նախաձեռնությամբ

հանդես էր եկել Քաթարի էմիր Համադ բեն Խալիֆա ալ Թանին: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ նա արդեն պատրաստակամություն է հայտնել ներդնելու 250 մլն դոլար:

Հանդիպման մասնակիցները Եվրոպային եւ ԱՄՆ-ին կոչ են արել ճանաչել Պաղեստինի պետությունը, իսկ համաշխարհային ընկերակցությանը՝ ճնշում գործադրել Իսրայելի վրա, որպեսզի նա վերացնի Գազայի շրջափակումը: Ինչ վերաբերում է պաղեստինցիներին, նրանց կոչ է արվում միավորվել ներկայիս մարտահրավերներին դիմակայելու համար:

Բեռլինի պարտքի խնդիրը կշարունակվի՝ չնայած բողոքներին

Գերմանիայի վերամիավորումից հետո յուրօրինակ բացօթյա պատկերասրահ դարձած եւ East side gallery անվանակոչված Բեռլինի պարսպի խնդրան աշխատանքները կշարունակվեն՝ չնայած բնակչության բողոքի բազմահազարանոց ելույթներին:

Մայրաքաղաքի իշխանությունները որոշել են ազատվել պատմական եւ մշակութային հուշարձանից, քանի որ պարսպի 1,3 կիլոմետր հատվածը խանգարում է Շպրեե գետի մերձակա տարածքում կառուցապատման նպատակով օգտագործվող հատուկ տեխնիկայի երթեւեկին: Իշխանությունները մտադրվել են դիտարժանության տեղում կառուցել կամուրջ, որը կմիավորի Ֆրիդրիխայն-Կրոյցբերգի շրջանը:

Պարիսպը քանդելու առաջին փորձն ավարտվել էր անհաջողությամբ. աշխատանքների ծավալմանը խանգարել էին քաղաքացիական ակտիվիստները, որոնք մի քանի օր շարունակ անցկացնում էին բազմամարդ ցույցեր: Շինարարները հաստատել էին ԽՍՀՄ-ի օրոք կառուցված ամուր պարսպի վրա միայն փոքր անցք բացել, որը բնակիչներն անմիջապես ծածկել էին կարմիր ժապավենով: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հիշեցնում է, որ բողոքի բոլոր միջոցառումները տեղի էին ունեցել խաղաղ ձեւով:

Մարտի 27-ի առավոտյան Բեռլինում ապամոնտաժվել է պարսպի եւս 4 բլոկ՝ մոտ 6 մետր ընդհանուր լայնությամբ: Ականատեսների խոսքերով՝ մարդիկ հավաքվում էին շինհրապարակի շուրջը, սակայն բողոքի քայլեր առայժմ չեն ձեռնարկվում: Աշխատանքների անցկացման վայրում կարգուկանոնի ապահովմանը մասնակցում են մոտ 250 ոստիկաններ:

ԴՈՒՐԲԻՆ

Պուտինը BRICS-ի երկրներին համեմատեց հինգ «արժանավոր» գազանների հետ

«Ռուսաստանը պատրաստ է առեւտրական եւ ներդրումային նոր նախագծերի»

Բրազիլիայի, Ռուսաստանի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Չինաստանի նախագահները եւ Հնդկաստանի վարչապետը մասնակցում են ՀԱՀ-ի Դուրբին քաղաքում մարտի 26-ից անցկացվող BRICS-ի խմբի երկրների գագաթաժողովին: Տվյալ անվանումը այդ 5 երկրների սկզբնատառերից կազմված անգլերեն հապավումն է: Մարտի 27-ի օրակարգում էին համաշխարհային տնտեսության հիմնահարցերը, Մերձավոր Արեւելքի իրադրությունը, ինչպես նաեւ գործարար խորհրդի եւ Զարգացման բանկի ստեղծումը:

BRICS-ի գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ աշխատանքային նախաճաշի ժամանակ ելույթ ունենալով՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ Ռուսաստանը հանդես է գալիս կազմակերպության անդամ 5 երկրների փոխադարձ առեւտրի ու ներդրումների ծավալման օգտին: «BRICS-ի կազմում կա 5 երկիր, իսկ Աֆրիկայում հնգյակն ունի առանձնահատուկ իմաստ: Աֆրիկյան մեծ հնգյակը աֆրիկացի որսորդների շրջանում առավել «արժանավոր» ու հարգված կաթնասունների 5 տեսակների՝ փղի, ռնգեղջյուրի, գոմեշի, առյուծի եւ ընձառյուծի ավանդական անվանումն է», պարզաբանել է Պուտինը:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը մեջբերում է նրա այն խոսքերը, որ BRICS-ը աշխարհի ամենամեծ շուկան է: Այդ հինգ երկրներում ապրում է մոլորակի բնակչության 40 տոկոսը (2,9 մլրդ մարդ), կան վիթխարի բնապաշարներ, հզոր արդյունաբերական բազա եւ արհեստավարժ կադրեր: Այդ երկրներում ստեղծվում է համաշխարհային ՀՆԱ-ի գրեթե 30 տոկոսը:

«Կարեւոր է, որ մեր երկրները պահպանեն տնտեսական զարգացման առաջանցիկ տեմպերը», շարունակել է Պուտինը՝ ընդգծելով, որ Ռուսաստանի տնտեսությունը բաց է «առեւտրական եւ ներդրումային նոր նախագծերի համար»: Նրա խոսքերով, Ռուսաստանում պահպանվում է առեւտրի դրական հաշվեկշիռը (2012-ին՝ 195 մլրդ դոլար), հետեւողականորեն կրճատվում է գործազրկությունը, որը ներկայումս իջել է պատմականորեն նվազագույն մակարդակին՝ 5,5 տոկոսի:

«Հաշվենկատ բյուջետային քաղաքականության» շնորհիվ ՌԴ պետական պարտքի մակարդակը (2,5%) աշխարհում ամենացածրերից է:

Պուտինն ավելացրել է, որ իր երկիրը պատրաստ է ամրապնդել համագործակցությունը բարձր տեխնոլոգիաների ոլորտում, համատեղ յուրացնել տիեզերքը, զարգացնել գիտությունը: 2012 թվականին BRICS-ի մյուս անդամների հետ Ռուսաստանի առեւտրաշրջանառության ծավալը կազմել է 105 մլրդ դոլար, եւ «դա սահման չէ»:

Նա խոսացել է, որ Ռուսաստանն Աֆրիկայում կիսամաֆինանսավորի ենթակառուցվածքային նախագծերը եւ «կանաչ էներգետիկան»: Նրա խոսքերով, «BRICS-ի շրջանակներում աշխատանք է կատարվում զարգացող եւ նվազ զարգացած տնտեսություններին, այդ թվում՝ ՌԴ աֆրիկյան բարեկամներին օժանդակելու նպատակով»:

ԱՄՆ գաղտնի ծառայության առաջին կին ղեկավարը

Նախագահ Բարաք Օբաման պետության ղեկավարի պաշտպանությամբ զբաղվող գաղտնի ծառայության ղեկավարի պաշտոնում նշանակել է գործակալ Ջուլիա Պիրսոնին: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ նա առաջին կինն է այդ պատասխանատու պաշտոնում:

Պիրսոնը անցյալում աշխատել է որպես գաղտնի ծառայության շտաբի պետ: Նրա նոր նշանակումը Կոնգրեսի հաստատման կարիքը չունի:

Գաղտնի ծառայության նախկին ղեկավար Մարկ Սալլիվանը հրաժարական տվեց փետրվարի սկզբներին: Դա կարող էր լինել նրա ենթակաների վարքագիծի հետեւանքը, որոնք Օբամայի Կոլումբիա կատարած այցելության ժամանակ ներքաշվել էին տեղացի պոռնիկների հետ կապված սկանդալի մեջ: Սալլիվանը ծառայությունը ղեկավարել էր 7 տարի, իսկ գործակալությունում նրա ընդհանուր աշխատանքը 30 տարի էր:

Գաղտնի ծառայությունը զբաղվում է ոչ միայն նախագահի, այլեւ նրա ընտանիքի, ինչպես նաեւ ԱՄՆ նախկին նախագահների պաշտպանությամբ, պայքարում է ամերիկյան արժույթի եւ պետական պարտատոմսերի կեղծումների դեմ: Մինչեւ 2003 թվականը ծառայությունը ֆինանսների նախարարության ստորաբաժանումն էր:

«Երկաթե երկեր»-ի հեղինակի բացակա ներկայությամբ

Հակոբ Հակոբյանի քանդակի աշխարհը

Արտաքին աշխարհը «հանձնելու» ներքին տեսողության հսկողությանը, ներքուս ունենալով գեղեցիկը տեսնելու պաշար, երեւույթների ու իրերի ամեն շերտի ու ձեւի մեջ նոր իմաստ հայտնաբերելու կարողություն, մեծ տաղանդի ու երեւակայության արդյունք է, որի շնորհիվ յուրաքանչյուր իր՝ աննշան կամ ոչ, երկրորդ կյանք է առնում, ապրում արվեստի մեջ, արվեստի օրենքներով: Այն ստանում է գեղագիտական արժեք, նոր նշանակությամբ եւ նոր բովանդակությամբ իր տեղը հաստատում այդ կյանքում: Մեր հայացքի առաջ միաձգամայն կենցաղային նշանակությամբ արհեստագործական պարզ իրերը՝ ենթարկված մետամորֆոզների, արվեստի ուժ են ձեռք բերել՝ քանդակի ձեւ ու տեսք ստանալով: Նորարարական արվեստի ջատագով եւ ներկայացնող Գաֆեսճեան արվեստի կենտրոնում Հակոբ Հակոբյանի քանդակների մետաղական աշխարհը, երկաթի գույնը նախ՝ զարմանքի, ապա մտածելու առիթ են տալիս: Գեղանկարիչը հիմնովին վերափոխում է այսպիսի իրերին սովորաբար անտարբերության մատնած մեր վերաբերմունքը:

Լինելով մարդակենտրոն արվեստի կողմնակից՝ ստեղծագործական որոշակի փուլում Հակոբյանը նոր մտածողություն ու նոր կերպարներ ներմուծեց իր արվեստ. այդ աշխարհում հայտնվեցին նոր «անձեր», մարդուն, կարելի է ասել, փոխարինեցին մանեկենները. իր կտավներին՝ իբրեւ մետաֆոր սկսեցին «գործել» երկաթե սրասամ կտրիչները, աքցանները, մկրատները՝ որպես կյանքի տագնապի ազդանշաններ, ներդաշնակությունը խախտող-վիրուսներ:

Ստեղծագործական ընթացքի մեջ երկաթե այդ գործիքներն ասիճանաբար փոխեցին իրենց ձեւերը, Վարպետի կյանքի վերջին տասը տարիներին քանդակային մարմնավորում առան:

Քանդակի նյութը նաեւ երկաթն է, որն արվեստագետի զգայուն շփումից կերպարային հաղորդականություն է ձեռք բերում, բայց այս պարագայում զարմանալին նյութը չէ, որքան առարկայի, գործիքների «անատոմիան» փոխելու երեւակայությունը եւ «մարմնի» կառույցին նոր ձեւ տալն ու շունչ հաղորդելը, այսինքն՝ կերպափոխելու հայտնի աշխարհը՝ վերամարմնավորելու այլ իրականություն- որտեղ կյանքն արտահայտված է իր ողջ բազմազանությամբ, ամենատարբեր իրավիճակներով ու ժամանակներով, մարդկային փոխհարաբերությունների ու բնության կենդանի «ձայներով»: Պողպատե գործիքների տարբեր միակցությունը հյուսում է սրառուչ պատմություններ՝ ուժի, պայքարի («Մարտիկը), կամքի, հաղթանակի, պարտության ու դաժանության («Անգղը»), խոհի («Մտասուզում») ու սիրախաղի («Սիրահետում»), սիրո ու նվիրվածության («Ընտանիք»), ճկունության, նազանքի ու պլաստիկայի («Պարողները»): Եվ որքան առնականություն, ամրություն, նույնքան քնարականություն ու քնքշություն կա այդ աշխարհում, այսինքն՝ կյանքն իր այլաձեւումներով-բեւեռումներով ներկա է, կա: Ահավասիկ արվեստագետ, որ հաղթահարել է ոչ միայն նյութի դիմադրությունը, այլեւ առարկայի ընտրության քմահաճությունը, արվեստ ու զգացմունք ներմուծելով անգամ ամենաանհաղորդ թվացող աշխարհ:

Երբ սրահը բազմամարդությունից թոթափվեց, եւ լռեցին մարդկային ձայները, քանդակները վերագտան իրենց ինքնությունը՝ մնալով իրենց ստեղծողի լուռ խորհրդածության մեջ:

Քանդակների այս խումբը հայտնաբերում է Հակոբ Հակոբյան արվեստագետի նոր աշխարհը, մարդկային էությունների ու առասպելական էակների ֆանտասիկ աշխարհը: «Երկաթե երկերը» հաստատում են աշխարհի գեղեցկության բազմազանությունը, իրերի թաքնված ուժը, կյանքի վերափոխման հնարավորությունը, նյութի վերացարկման ու նորի հայտնաբերման հաճույքը, ազնիվ ու բարձր զգացումների առկայությունը:

...Դժվար է հավատալ, որ մեծադիր լուսանկարից նայող բարի, կենսաժպիտ հայացքով նկարիչը՝ իր անավարտ գործի առաջ, կյանքի վերջին օրերն էր ապրում: Եվ ահա մենք առաջին անգամ իր ցուցահանդեսին ներկա ենք իր բացակայությամբ: Սակայն դա այնքան էլ այդպես չէ, որովհետեւ իր ներկայությունն այնքան անմիջական է, կենդանի, որ երբեմն տարակուսանք է ծնում...

Հակոբ Հակոբյանի դուստրը՝ ճարտարապետ, նկարիչ **Նորա Հակոբյանը**, շատ զգայուն ու խորունկ անձնավորություն, որ մեր այս տխուր օրերին կարծես Վարպետի զգացումների փոխանցողն է, ընտանիքի կողմից փոխադարձ հարգանքի ու շնորհակալանքի խոսք ասաց, զուսպ ու ազդեցիկ. «Վարպետն ասում էր, որ արվեստագետը իր գործը դժվար հասցնի, որովհետեւ չի կարող իմանալ, թե ինչ նոր դռներ կարող են բացվել իր առաջ: Ասում էր, եթե մինչեւ 80-ը մահանայի, այս ամբողջ քանդակների խումբը չէր լինելու: Ամենաբաղը ինքը կուզենար այս ցուցահանդեսը տեսնել: Շնորհակալություն Գաֆեսճեան կենտրոնին, երիտասարդ այս համակրելի խմբին, որ սիրահոժար օժանդակեց, որպեսզի ցուցահանդեսը կայանա: Այս ցուցահանդեսը կարծես փոխհատուցումն է Հակոբ Հակոբյանի հանդեպ այս օրերի համաժողովրդական անկեղծ սիրո, հիացմունքի ու ջերմության: Այստեղ ամեն մարդ կունենա յուրաքանչյուր քանդակի իր բացատրությունը: Ցուցահանդեսը Վարպետի նվերն է բոլորիս»:

«...Իսկապես ստեղծագործական սխրանք է ազգային մշակույթի մեջ նոր բան ավելացնել, լինի գրող, լինի նկարիչ, լինի այլ ասպարեզի արվեստագետ, ցուցահանդեսի բացման խոսքում ասաց **Երվանդ Տեր-Խաչատրյանը**: Հակոբ Հակոբյանի ստեղծագործական ասպարեզ մտած ժամանակ տիտաններ կային՝ Մարտիրոս Սարյանը կար, Կալենցի նման նկարիչը կար, Երվանդ Քոչարը կար, Մինասն էր ստեղծագործում, եւ Հակոբ Հակոբյանը կարողացավ իր խոսքն ասել:

...Ամեն ժողովուրդ իրերի հանդեպ իր առանձնահատուկ վերաբերմունքն ունի. ճապոնացիների համար իրերը բացառիկ պոետական են եւ անվանում ունեն՝ իրերի թաքուն հմայքը: Բազմաթիվ օրինակներ կան՝ իրերի հանդեպ արվեստագետների ունեցած վերաբերմունքի, որովհետեւ իրերը ոչ միայն մարդկային գործողությունների արդյունք են, այլեւ հոգեբանության կրող եւ արտահայտիչ, ժամանակի մի մաս եւ բովանդակության բացահայտող: Եվ Հակոբ Հակոբյանը մեծ հայտնագործություն կատարեց- այն ինչ տեսնում ենք: Նկարչի արվեստանոցում, երբ դրանք բոլորը միասին, կողք-կողքի սեղանին էին, տպավորությունը ցնցող էր: Հետո հասկացանք, որ դա մեր հասարակությունն է, մենք ենք: Եթե քնքշություն ենք տեսնում, եթե հարձակվող, ագրեսիվ բան ենք տեսնում, դա մենք ենք: Արվեստագետը չի շողոքորթում, արվեստում չի կարելի շողոքորթել ոչ մեկին, նույնիսկ ժողովրդին: Նա մեր մասին ասում է ճշմարտությունը, այն ինչը բնորոշ է մեր տագնապած ժամանակներին, իր ապրած կյանքին, մեր ձգտումներին ու ցանկություններին, հոգեկան ապրումներին:

Երբ դիտում ենք այս քանդակները, պարզ երեւում է, որ ինքը չի մտածել արվեստագետի տարիքի մասին, որովհետեւ իսկական տաղանդը, մեծ տաղանդը երբեք չի ծերանում: Հակոբյանի զորավոր տաղանդը ինչպես կար իր ստեղծագործական կյանքի սկզբին, մինչեւ վերջ մնաց մեծ, հզոր, գեղեցիկ, ուժեղ եւ արտահայտիչ»:

Ներկայացնենք նաեւ **Շահեն Խաչատրյանի** կարծիքը, իսկ մեր մյուս զրուցակցի՝ **Պողոս Հայթայանի** տպավորությունը կիրառարակվի թերթի վաղվա համարում:

«Արվեստի միջազգային նոր ընթացքի, սկզբունքային նոր բնույթի ինքնատիպ լեզվի խիստ անհատական հաստատում է: Ամենակարեւորը՝ տարիքը նրան մղում էր տեսնելու աշխարհը այնպես, ինչպես այդ տարիքում միայն կարելի է տեսնել: Այս քանդակների մեջ տեսնում ենք կյանքի խորը արտահայտություններ, որ խոհեր է արթնացնում: Ինչպես 2000 տարի առաջ հունական անտիկ աշխարհում, այնպես էլ այսօրվա մեր աշխարհում բոլոր փոխհարաբերությունները՝ մարդկային, նույնն են. նոր ձեւեր, փոփոխություններ չկան եւ սա է ամենահատկանշականը: Նա տեսնում է գործիքները միաձգամայն այլ հայացքով, կտրատում է այնպիսի հատվածներ, որոնք իրար միացնելով՝ ամբողջանում եւ յուրահատուկ սիմվոլ-արտահայտչական կերպարներ են դառնում: Այդպես չե՞ն բոլոր մարդիկ, ոմանք շատ զուսպ, սիրալիր, ոմանք՝ լուռ, ոմանք՝ չար, ագրեսիվ:

Սա աշխարհի, մարդու մասին նոր խոսք է, նոր ձեւ: Եթե մենք այս ցուցահանդեսը արվեստի միջազգային կենտրոններում ներկայացնենք, նոր խոսք կլիներ ողջ աշխարհի համար:

Իր կյանքի վերջում էլ փայլեց Հակոբ Հակոբյանը, մնաց միշտ նորի որոնող, փնտրող արվեստագետ»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ամփոփվեցին «Online» մրցանակաբաշխության արդյունքները

Շարժվելով ժամանակի ռիթմով, անցկացվում է «Online» մրցանակաբաշխություն, որի նպատակն է ստանալ արդի թատրոնի իրական պատկերը՝ հանդիսատեսի օնլայն քվեարկության արդյունքում: Թե որքանով է այս ձեւաչափն ընդունելի, միանշանակ ասել չենք կարող, քանի որ հնչել են տարատեսակ մի շարք կարծիքներ:

Հատկանշական է, որ մրցանակաբաշխությունը հանրությանը բուռն քննարկումների առիթ տվեց: Նույնիսկ անվանակարգի ձեւակերպում փոխվեց (որի հետ լիովին համաձայն ենք - Մ.Հ.), ինչպես նաեւ մի քանի անվանակարգից էլ մասնակիցներ հանվեցին՝ հանրության բողոքների պատճառով:

Երեկ Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում տեղի ունեցավ «Online» մրցանակաբաշխության ամփոփումը:

«Տարվա լավագույն Online դերասան» մրցանակին արժանացավ Արմեն Մարգարյանը, որը 2012-ին նույնպես հաղթել էր այս անվանակարգում, իսկ «տարվա լավագույն Online դերասանուհի»՝ Տաթեւ Ղազարյանը, «տարվա լավագույն Online թատրոն»՝ Գյումրու պետական դրամատիկական թատրոնը, «տարվա լավագույն Online հարմարեցված պիես» եւ «տարվա լավագույն Online ներկայացում»՝ «Հացի խնդիրը», «տարվա լավագույն Online պրոդյուսեր»՝ Տիգրան Վիրաբյանը, «տարվա լավագույն Online թատերախումբ»՝ Էպսիդոնը, «տարվա լավագույն Online փառատոն»՝ Մնջախաղի միջազգային փառատոնը, «տարվա լավագույն Online բեմադրող ռեժիսոր»՝ Նարինե Գրիգորյանը, «տարվա լավագույն Online մշակութային լրագրող»՝ «**Ազգ**» օրաթերթի աշխատակից Մանանա Հովակիմյանը, «տարվա լավագույն Online պարային-երաժշտական ներկայացում»՝ «Կյանքի հինգ տարրերը», «տարվա լավագույն Online մանկական ներկայացում»՝ «Մատայի եւ արջի արկածները», «տարվա լավագույն Online բեմանկարիչ»՝ Տաթեւ Հարությունյանը:

«Online» մրցանակաբաշխության անվանակարգերի մասնակիցներն ընտրվել էին օնլայն դատում՝ առցանց մամուլում, առցանց ռադիոյում եւ հեռուստատեսությունում , սոց. ցանցերում, Google-ի որոնողական համակարգում եւ համացանցային այլ կայքերում 2012 թ.-ին ակտիվություն ցուցաբերած թատերական բոլոր գործիչները:

«Արգելված գրքերի» շարքը կհամալրվի

2012-ին «Անտարես» հրատարակչությունը նախաձեռնեց «Արգելված գրքեր» շարքի տպագրությունը, որի շրջանակում արդեն երեք գիրք լույս է տեսել՝ Էլիֆ Շաֆակի «Սատամբուլի բիձը», Հենրի Միլերի «Խեցգետնի արեւադարձը» եւ Ջորջ Օրուելի «1984»-ը: Իսկ շուտով կհրատարակի եւս երեքը՝ Լորենսի «Լեդի Չաթըրլիի սիրեկանը», Միշել Վերբեկի «Տարրական մասնիկները» եւ Կամիլ լը Մոնիեի «Տղամարդու սերը»:

Գրականագետ Արմենիկ Նիկողոսյանը երեկ լրագրողների հետ հանդիպմանը ընդգծեց, որ արգելված գրականություն ասելով՝ շատերը հասկանում են պոռնոգրաֆիա, ինչը թյուր կարծիք է: Նա օրինակ բերելով Էլիֆ Շաֆակի «Սատամբուլի բիձը» գիրքը՝ ասաց, որ այն արգելված գրականության ցանկում է, սակայն այս վերում պոռնոգրաֆիական ոչ մի տեսարան չկա: Նշենք, որ գրքերի գինը տատանվում է 5000-6000 դրամի սահմանում:

Վերջերս Facebook սոցիալական կայքում «Անտարես» հրատարակչությունը նկար էր տարածել, որը վերնագրված էր՝ «գիրք կարդալը սեքսուալ է»: Այդ միտքը հանրության մոտ բուռն քննարկումների առիթ տվեց՝ մեծամասամբ բացասական: Դրա առթիվ Արմեն Մարտիրոսյանն ասաց. «Դա գրել էինք ոչ թե ընթերցողների, այլ չընթերցողների համար, որը մի փոքրիկ հնարք էր: Եվ հետո, սեքսապիլ նշանակում է գրավիչ, իսկ գիրք կարդալը գրավիչ չէ» ***(*)***:

Անդրադառնալով ընթերցանությունը խթանող միջոցներից մեկին՝ գովազդին, «Անտարես» հրատարակչության տնօրեն Արմեն Մարտիրոսյանն ասաց. «Մեր իշխանության ներկայացուցիչներից հաճախ ենք լսում՝ գիրք կարդալ չեմ սիրում, քաղաքականությամբ զբաղվելու համար գիրք ընթերցել պետք չէ, եւ մարդիկ մտածում են, որ չաղ ու բախտավոր ապրելու համար գիրք ընթերցել պետք չէ»: Ըստ նրա, ընթերցանությունը խթանող միակ փորձը պետական պատշգամբի կողմից այն էր, երբ ԿԳ նախարար Արմեն Ազոյանը աշակերտների հետ հանդիպման ժամանակ գիրք կարդաց նրանց համար:

Ա. Մարտիրոսյանը նշեց, որ շարքում պետք է լինեն միայն գեղարվեստական արժեք ներկայացնող գրքեր եւ ավելացրեց, որ շուտով հրատարակչությունը նախաձեռնում է նաեւ ստեղծել «Չնոբելյան մրցանակակիրներ» շարք, որը ներկայացնելու է Նոբելյան մրցանակ այդպես էլ չստացած հեղինակների գործերը:

Արմեն Մարտիրոսյանը ցավով նշում է, որ ընթերցողների թիվը 90 տոկոսով նվազել է, որը երեւում է գրքերի վաճառքի քանակից:

Անդրադառնալով գրքի Աբովյան փողոցի գետնանցումում գտնվող տոնավաճառի փակման խնդրին՝ պարոն Մարտիրոսյանն ասաց, որ տարիներ շարունակ հայաստանյան հրատարակչական ընկերությունները տուժել է այդ «սեւ շուկայից» եւ ամենամեծ վտանգն այն էր, որ հրատարակչությունների կողմից հրատարակած գրքերի պատճենված տարբերակներն էին վաճառվում «սեւ շուկայում», ու ընթերցողն էլ հանցակից էր դառնում դրան:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

(*) *Այս արտահայտությունը՝ sexappeal, հայերեն կարելի է թարգմանել սեռագրավիչ կամ սեռահրապուրիչ:*

«Արտավազդ» մրցանակաբաշխություն

Երեկ՝ թատրոնի միջազգային օրը, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի ունեցավ ՀԹԳՄ «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությունը: Այս տարի այն նվիրվեց մեր հանճարեղ դերասան Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակին:

Թե ով ի՞նչ մրցանակի արժանավ, կիմանաք կարդալով «Ազգ» օրաթերթի վաղվա համարը:

Նշենք, որ «Արտավազդ» մրցանակաբաշխության փորձագետների խմբի անդամներն են Դավիթ Մուրադյանը, Սուրեն Հասմիկյանը, Հրաչյա Գասպարյանը, Լեւոն Մութաֆյանը, Ռուզաննա Առաքելյանը, Նվարդ Ասատրյանը եւ Նարինե Գրիգորյանը:

Մարզական

Խնդրի բացակայության դեմքում ինչի՞ համար պայքարել

Չեխիայի հավաքականից կրած խոշոր հաշվով պարտությունից հետո Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն, անդրադառնալով հանդիպմանը, ընդհանուր առմամբ գոհ է մնացել մեր ֆուտբոլիստների ցուցադրած խաղի որակից, միաժամանակ դժգոհել է, որ արդյունք չկա: Նա նաեւ խոստովանել է, որ ընտրական այս մրցաշարում հավաքականի առջեւ որեւէ խնդիր չի դրվել, ինքը երբեւէ չի հայտարարել, թե Բրազիլիայում կայանալիք աշխարհի առաջնության ուղեգիր ենք նվաճելու: Ըստ Մինասյանի, ֆուտբոլիստների գլխավոր խնդիրը կատարելագործվելն է:

Բնական հարց է ծագում. եթե հավաքականի առջեւ խնդիր դրված չէ, ապա ֆուտբոլիստներն ինչի՞ համար են պայքարում: Իսկ եթե հավաքականը չպետք է բարձր նպատակներ հետապնդի, ապա ֆուտբոլիստների կատարելագործվելու իմաստը ո՞րն է՝ արտերկիր մեկնելու հնարավորություն ստանա՞լը:

Դեռեւս Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում, երբ Հայաստանի հավաքականը բավականին հաջող էր հանդես գալիս եւ իրական հնարավորություններ ուներ պայքարելու եզրափակիչի ուղեգրի համար, Վարդան Մինասյանը մշտապես խուսափում էր իր սաների հաջորդ փուլ դուրս գալու հնարավորությունները գնահատելուց: Այն ժամանակ նա գլխավոր խնդիր էր համարում հավաքականի խաղի կայունացումը, մարտունակ կոլեկտիվի կազմավորումը՝ ուղեգիր նվաճելու խնդիրը թողնելով աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում լուծելու: Սակայն արդեն մեկնարկից մեր հավաքականը ձախողվեց եւ արդեն ավելորդ է նույնիսկ երազել ուղեգրի մասին: Բայց մենք հավաքականից առաջին հերթին բովանդակալից խաղ ենք պահանջում:

Ժամանակին, երբ մեր հավաքականը մեծ ներուժ չուներ, մեր ամենափորձառու ֆուտբոլիստներից մեկը՝ Սարգիս Հովսեփյանը, դժգոհում էր, որ իրենց առջեւ կոնկրետ խնդիր չէր դրվում: Նա իրավացիորեն նշում էր, որ նման իրավիճակում ֆուտբոլիստները թեւաթափ են լինում, շատ դեմքերում լրիվ ուժերով պայքարելու ցանկություն չի լինում:

Խաղից հետո **Վարդան Մինասյանի** մյուս խոսքերը ներկայացնենք առանց մեկնաբանության. «Խաղի ընթացքն այնպիսին էր, որ ով առաջինը գոլ խփեր, նա էլ կհաղթեր: Եթե դիտել ենք Դանիայի հետ չեխերի խաղը, ապա այնտեղ նույն սցենարն էր: Յուրաքանչյուր պարտությունում էլ մեղավորը մարզիչն է: Կենտրոնական պաշտպանների խաղից գոհ եմ: Տարոն Ոսկանյանը գերազանց խաղաց, չնայած որոշ սխալների առկայությանը: 2-րդ գոլի ժամանակ սխալ որոշում կայացրեց Արզումանյանը: Այս խաղի համար Ոսկանյանի տարբերակը նախընտրելի էր Արսյոմ Խաչատուրովից: Արաս Օզբիլիսը 10 որ չէր մարզվել, ուստի մեկնարկային կազմում խաղաց Մանուչարյանը: Իսկ Սարկիսովին խաղադաշտ ենք դուրս բերում խաղն ազատագրելու համար: Կամո Հովհաննիսյանի անցումները թերեւս լարվածության պատճառով չէին ստացվում: Հաշվի առնելով Կամոյի խաղային որակները՝ գոհները կազմակերպում էինք եզրերով»:

Ներկայացնենք նաեւ Չեխիայի հավաքականի գլխավոր մարզիչ **Միխալ Բիլեկի** տեսակետը. «Ուրախ եմ, որ Դանիայի հավաքականից կրած պարտությունից հետո տուն ենք վերադառնում 3 միավոր վաստակած: Ուսումնասիրել էինք ՀՀ հավաքականի խաղը: Հասկացել էի, որ նրանք շատ ուժեղ են առջեւի գծում եւ ունեն ուժեղ հարձակվողներ, որոնց հաջողվեց վնասազերծել: Առաջին հերթին սա թիմային հաղթանակ էր, մասամբ նաեւ՝ մարզչական: Տղաները մեծ պատասխանատվությամբ մոտեցան հանդիպմանը, որի համար շնորհակալ եմ: Նշել էի, որ պարտվելու դեմքում հրաժարական կտամ: Այժմ իմ ճակատագիրը ֆեդերացիայի ձեռքում է: Խմբում բարդ իրավիճակ է ստեղծվել, դեռ շատ խաղեր կան: Մենք դեռ մեր վերջին խոսքը չենք ասել: Նույնը կասեմ նաեւ հայերի համար, որոնք եւս գոլ խփելու հնարավորություններ ունեին, բայց չիրացրին»:

ՇԱԽՄԱՏ

Արոնյանը 2-րդ անգամ հաղթեց Իվանչուկին

Մեկօրյա հանգստից հետո հավակնորդների մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղատեղանների շուրջը՝ անցկացնելով 10-րդ տուրի հանդիպումները: Նախորդ տուրում մրցաշարում կրած առաջին պարտությունից հետո Լեւոն Արոնյանը հաջող խաղաց Վասիլի Իվանչուկի հետ պարտիայում ու սպիտակներով արդեն 30-րդ քայլին պարտության մատնեց մրցակցին: Հիշեցնենք, որ առաջին շրջանում էլ հայ գրոսմայստերը հաղթել էր Իվանչուկին: Արոնյանը վաստակեց 6,5 միավոր ու շարունակում է աղյուսակը գլխավորող Մագնուս Կառլսենի հետապնդումը: Վերջինս Գելֆանդի հետ մրցավեճում հաղթանակ տոնեց ու վաստակեց 7 միավոր:

Առաջատարներին հետապնդող Վլադիմիր Կրամնիկի համար տուրը հաղթական էր: Պարտության մատնելով Գրիշչուկին, Կրամնիկը վաստակեց 6 միավոր: Ռաջաբովի եւ Սվիդլերի մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի: Գելֆանդը, Սվիդլերն ու Գրիշչուկն ունեն 4,5-ական միավոր:

Այսօր կայանալիք 11-րդ տուրում Արոնյանը սեւերով կխաղա Սվիդլերի հետ: Նրանց առաջին շրջանի մրցավեճն ավարտվել էր ոչ-ոքի: Կառլսենի մրցակիցը կլինի Գրիշչուկը: Կկայանան նաեւ Կրամնիկ-Ռաջաբով, Իվանչուկ-Գելֆանդ պարտիաները:

Մկրտչյանը հաղթողին զիջեց կես միավորով

Հնդկաստանում անցկացված շախմատի շրջանաձեւ մրցաշարում հաջող հանդես եկան Հայաստանի ներկայացուցիչները: Ավարտական տուրում հաղթելով Էլիզաբեթ Պյոտչին, Լիլիթ Մկրտչյանը 11 հնարավորից վաստակած 7,5 միավորով 12 մասնակիցների մեջ զբաղեցրեց 2-րդ տեղը: Լիլիթն ընդամենը կես միավորով հետ մնաց մրցաշարի հաղթող, ռուսաստանցի Օլգա Գիրյայից, որը հաշտություն կնքեց Քի Գուոյի հետ: Գիրյան միակն էր, որ մրցաշարում պարտություն չկրեց: Մկրտչյանը միակ պարտությունը կրել էր հենց Գիրյայից: Փաստորեն դա էլ ճակատագրական եղավ հայ շախմատիստուհու համար:

Էլինա Դանիելյանի համար էլ 11-րդ տուրը հաղթական էր: Նա առավելության հասավ Նիշա Մոհոտայի նկատմամբ: Էլինան 6 միավորով գրավեց 4-րդ տեղը:

Շատ ֆուտբոլասերներ տոմսերով չեն կարողացել մարզադաշտ մտնել

Հայաստան-Չեխիա հանդիպման նկատմամբ ֆուտբոլասերների հետաքրքրությունը բավականին մեծ էր, ուստի պատահական չէր, որ «Հանրապետական» մարզադաշտը լեփ-լեցուն էր: Սակայն տոմս գնած ոչ բոլոր ֆուտբոլասերներին հաջողվեց ներկա գտնվել հանդիպմանը: Խաղից քիչ առաջ նրանց առջեւ ոստիկանությունը փակել էր մարզադաշտի դարպասները, հայտարարելով, որ այլեւս մարզադաշտում տեղ չկա, ինչը հարուցել էր ֆուտբոլասերների արդարացի վրդովմունքը: Նրանք փորձել էին ներս մտնել, սակայն հանդիպել էին ոստիկանների հոծ շարքերին, սկսվել էր հրմշտոցը:

Միջադեպի առիթով գյումրեցի մի խումբ ֆուտբոլասերներ Galatv.am կայքի միջոցով բաց նամակ են հղել Հայաստանի ոստիկանությանն ու ֆուտբոլի ֆեդերացիային՝ պահանջելով պատասխան տալ ստեղծված իրավիճակի համար, պատժել մեղավորներին եւ վերադարձնել գնված տոմսերի գումարները:

Առաջատարներն ամրապնդեցին դիրքերը

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում կայացան հերթական հանդիպումները: Բ խմբում, որտեղ հանդես է գալիս Հայաստանի հավաքականը, հերթական հաղթանակը տոնեց Իտալիայի ընտրանին, որը Մարիո Բալոտելիի խփած 2 գոլերի շնորհիվ հյուրընկալվելիս հաղթեց Մալթայի հավաքականին: Բալոտելին հաշիվը բացեց 11 մ հարվածով: Մալթայի հավաքականը կարող էր պատասխան գոլը խփել, սակայն Միֆսուդին չհաջողվեց դիպուկ իրացնել 11 մ հարվածը: Հաջող խաղաց Ջանլուիջի Բուֆոնը: Իտալացիները 13 միավորով վստահորեն գլխավորում են աղյուսակը:

Չեխերի նկատմամբ հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթանակ տոնելուց հետո Դանիայի ընտրանին սեփական հարկի տակ չկարողացավ առավելության հասնել բուլղարացիների նկատմամբ: Դանիան հայտնվել էր պարտության վտանգի առաջ, երբ 51-րդ րոպեին Մանոլեւը բացել էր հաշիվը: Միայն 11 մ հարվածի շնորհիվ, որն իրացրեց Ագերը, դանիացիները խուսափեցին պարտությունից:

Ա խմբի առաջատարներ Բելգիայի եւ Խորվաթիայի հավաքականները հերթական հաղթանակները տոնելով, ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը: Նրանք վաստակել են 16-ական միավոր եւ 9-ով առաջ են անցել 3-րդ տեղում ընթացող սերբերից, որոնք հաղթեցին շոտլանդացիներին (2-0): Բելգիացիները սեփական հարկի տակ առավելության հասան մակեդոնացիների նկատմամբ (1-0), իսկ խորվաթները հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեցին Ուելսի ընտրանուն:

Շ խմբի առաջատար Գերմանիայի ընտրանին էլ եզրափակիչի ուղեգիր նվաճելու լուրջ հայտ է ներկայացրել: 4-1 հաշվով հաղթելով դաշնակներին, գերմանացիները 16 միավորով գլխավորում են աղյուսակը: 2-րդ տեղում ընթացող Ավստրիայի հավաքականն Իռլանդիայում խաղն ավարտեց ոչ-ոքի (2-2) եւ վաստակեց 8 միավոր:

Դ խմբում հաղթարշավը շարունակեց Հոլանդիայի հավաքականը՝ տոնելով 6-րդ անընդմեջ հաղթանակը: Հոլանդացիները 4-0 հաշվով ջախջախեցին ռումինացիներին: 11 միավորով 2-րդ տեղում ընթացող հունգարացիները Թուրքիայում ոչ-ոքի (1-1) խաղացին տանտերերի հետ: Էստոնիայի հավաքականը 2 անպատասխան գնդակ խփեց անդորրացիների դարպասը:

Զ խմբում Պորտուգալիայի հավաքականն առանց Քրիստիանու Ռոնալդուի Բաֆվում 2-0 հաշվով հաղթեց ադրբեջանցիներին ու վաստակեց 11 միավոր: Իսրայելի ընտրանին էլ հյուրընկալվելիս պարտության մատնելով Հս. Իռլանդիայի հավաքականին (2-0), նույնպես ունի 11 միավոր: Իսկ առաջատարը 12 միավորով Ռուսաստանի ընտրանին է, որը 2 խաղ պակաս է անցկացրել:

Հ խմբում ուշադրության կենտրոնում էր Չեռնոգորիայի եւ Անգլիայի հավաքականների մրցավեճը, որն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Չեռնոգորիան 14 միավորով պահպանեց առաջատարի դիրքը՝ 2 միավորով գերազանցելով անգլիացիներին: Խմբի մյուս խաղերում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Ուկրաինա-Մոլդովա՝ 2-1, Լեհաստան-Սան Մարինո՝ 5-0:

Ի խմբում առաջատարի դերը կրկին ստանձնեց Իսպանիայի հավաքականը, որը հյուրընկալվելիս Պեդրո Ռոդրիգեսի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց ֆրանսիացիներին ու վաստակեց 11 միավոր: Մեկ միավոր պակաս ունի Ֆրանսիայի հավաքականը:

Մրցաշարային աղյուսակ

Բ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իտալիա	5	4	1	0	12-4	13
2. Բուլղարիա	6	2	4	0	11-4	10
3. Չեխիա	5	2	2	1	6-4	8
4. Դանիա	5	1	3	1	6-5	6
5. Հայաստան	4	1	0	3	2-7	3
6. Մալթա	5	0	0	5	1-14	0

Երկու մրցանակակիր

Անթալիայում անցկացված ձյուդոյի պատանիների Եվրոպայի գավաթի խաղարկության հերթական փուլում հրազդանցի ձյուդոյիստներ Շահեն Աբաջյանն ու Վարդգես Բաղդասարյանը մինչեւ 55 կգ քաշային կարգում արժանացան բրոնզե մեդալների:

Հայաստանի պատանի ձյուդոյիստները կմասնակցեն նաեւ մարտի 29-31-ը Կիեւում եւ ապրիլի 7-8-ը Տվերում անցկացվելիք Եվրոպայի գավաթի խաղարկության հաջորդ փուլերին:

Օզիլը բանակցում է «Ռեալի» հետ

Մադրիդի «Ռեալի» եւ Գերմանիայի հավաքականի 24-ամյա կիսապաշտպան Մեսութ Օզիլը մտադիր է երկարաձգել պայմանագիրն ակումբի հետ աշխատավարձի բարձրացմամբ: Ներկայումս ֆուտբոլիստը 5 մլն եվրո տարեկան աշխատավարձ է ստանում: Պայմանագիրն ուժի մեջ է մինչեւ 2016-ի ամառ: Գործող պայմանագրում կետ կա, որի համաձայն, ֆուտբոլիստի ելույթներից պայմանավորված հնարավոր է պայմանների վերանայում կատարել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ֆրանկոֆոնիա. հնարավորություն Հայաստանի համար

Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը** երեկ ելույթ է ունեցել Ֆրանսիական համալսարանում անցկացված «Ֆրանկոֆոնիա. հնարավորություն Հայաստանի համար» համաժողովում, որին ներկա են եղել Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, հայկական առաջատար բուհերը ներկայացնող դասախոսներ եւ ուսանողներ:

Իր խոսքում նախարար Նալբանդյանը, ըստ News.am-ի, նշել է, որ լինելով Հայաստանի Հանրապետության դեսպանը Ֆրանսիայում՝ պատիվ է ունեցել առաջին քայլերը ձեռնարկել Հայաստանի եւ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջեւ հարաբերությունների հաստատման գործընթացում: Հայաստանը 2006-ին դարձել է կազմակերպությունում դիտորդ, այնուհետեւ 2008 թ.-ին՝ ասոցացված անդամ եւ ի վերջո 2012-ին՝ լիիրավ անդամ:

«Կինշասայում կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովին կազմակերպությանը Հայաստանի լիիրավ անդամակցությամբ նոր էջ բացվեց ֆրանկոֆոն աշխարհի հետ մեր հարաբերություններում: Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը մեզ համար փոխշփումների նոր հարթակ է աշխարհի հինգ մայրցամաքներում գտնվող ֆրանկոֆոն երկրների հետ՝ քաղաքական, տնտեսական եւ մշակութային համագործակցության բնագավառներում», ասել է նախարարը:

Նախարար Նալբանդյանը նաեւ շեշտել է, որ վերջին տասնամյակի ընթացքում բազում ջանքեր են գործադրվել Հայաստանի կրթական եւ համալսարանական համակարգում ֆրանսերենի ներկայության ամրապնդման համար պայմանների ստեղծման եւ Հայաստանում ֆրանսախոս միջավայրի ձեւավորման ուղղությամբ, եւ այդ ջանքերի լավագույն ապացույցներից է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի արդյունավետ գործունեությունը:

«Յուրաքանչյուր տարի ֆրանսերենով հարյուրավոր մշակութային, կրթական եւ համալսարանական միջոցառումներ են կազմակերպվում Երեւանում եւ Հայաստանի շրջաններում: 2013 թ. մարտի 19-ին մեկնարկած ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում նախատեսված է 410 միջոցառում, որն աննախադեպ է իր ծավալով»,-հավելել է Նալբանդյանը:

Հայաստանն ակտիվորեն մասնակցում է Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի աշխատանքներին, 2011թ. Երեւանում կայացել է Ֆրանսախոս քաղաքապետների միջազգային ընկերակցության գլխավոր վեհաժողովը, այս տարվա հոկտեմբերին Վալանսում կայանալիք հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երրորդ համաժողովը կնախանշի հետագա անելիքները եւ առավել կամրապնդի այդ ոլորտում գործընկերային համագործակցությունը:

«Հայաստանը իր նպաստը կբերի միջազգային ասպարեզում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հեղինակության եւ դերակատարության բարձրացմանը, կազմակերպության առավել ներգրավվածությանը միջազգային գործընթացներում», -ավարտելով իր ելույթը, նշել է նախարարը:

Համաժողովի բացմանը ելույթներով հանդես են եկել նաեւ Ֆրանսիական համալսարանի ռեկտոր **Ժան-Ժակ Մոնթուան** եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան **Անրի Ռենոն**:

Անվճար Orange WiFi ինտերնետ Երեւանի եւս երկու բուհում

Երեկ տեղի ունեցավ Orange WiFi «անկյունների» պաշտոնական բացումը Հայաստանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանում եւ Հայաստանի պետական կոնսերվատորիայում: Համալսարաններում անվճար WiFi-ով զինված անկյունների ստեղծման ծրագիրը մեկնարկել է դեռ 2011թ., նախատեսվում է 2013 թ. ընթացքում նման անկյունների թիվը հասցնել 13-ի, որոնցից 9 Երեւանի եւ 4-ը՝ մարզային համալսարաններում: Շուտով Գեղարվեստի պետական ակադեմիայի, Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղի եւ Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները նույնպես կկարողանան օգտվել իրենց բուհի ամենամարդաշատ վայրում տեղադրված անվճար Orange WiFi ինտերնետից:

«Ինտերնետն արդեն մեր առօրյա կյանքի, ինչպես նաեւ ուսումնական գործընթացների անբաժան բաղկացուցիչն է: Այն այսօր աշխարհի համալսարաններում նույնքան կարեւոր եւ պարտադիր է, ինչքան գրադարանը: Վստահ եմ, որ այս WiFi անկյունները կփոխեն ուսանողների ամենօրյա ուսումնական կյանքը եւ կհեշտացնեն նրանց գործը», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբերը:

Հայաստանի համալսարանների հետ Orange-ի համագործակցությունը միայն WiFi անկյունների ստեղծումն ու անվճար ինտերնետի տրամադրումը չի ընդգրկում: Համալսարանների մեծ մասի հետ Orange-ը նաեւ համագործակցում է այլ ոլորտներում, ինչպես ուսանողական կրթաթոշակների հատկացում, մասնագիտական պրակտիկայի կազմակերպում Orange-ում, ինչպես նաեւ ընկերության աշխատակիցների կողմից մասնագիտական եւ վերապատրաստման դասընթացներ ուսանողների համար:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

Սույն թվականի ապրիլի 22-ին, ժամը 12:00-ին ք. Երեւան, Դավթաշեն I թաղամաս, 42/2 հասցեում տեղի է ունենալու «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

www.azg.am

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է

ԱԺ Պատվո մեդալ՝ թատերական գործիչներին

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ մշակույթի բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար երեկ ԱԺ Պատվո մեդալներով պարգեւատրեց ոլորտի մեկ տասնյակից ավելի գործիչների՝ Վարդուհի Վարդերեսյանին, Երվանդ Ղազանչյանին, Լեյլի Խաչատրյանին, Մարգո Մուրադյանին, Էվելինա Շահիրյանին, Ալեքսանդր Գրիգորյանին, Կամո Հովհաննիսյանին, Սիլվա Յուզբաշյանին, Բարսեղ Թումանյանին, Գեղանուշ Սայադյանին: ԱԺ նախագահի պատվոգրերով ու շնորհակալագրերով պարգեւատրվեցին թատերական արվեստի շուրջ հինգ տասնյակ գործիչներ: Շնորհավորելով պարգեւատրվածներին՝ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը նշեց.

«Թատրոնը անկեղծ երկխոսություն է հանդիսատեսի հետ, ուստի միշտ կմնա արդիական եւ, համոզված եմ, կպահպանի Վահրամ Փափազյանի, Վարդան Աճեմյանի, Հրաչյա Ներսիսյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի, Պետրոս Ադամյանի, Հովհաննես Աբելյանի, Սիրանույշի, Արուս Ոսկանյանի ու մեր թատրոնի մյուս երախտավորների ստեղծած ավանդույթները:

Ասում են՝ թատրոնն արվեստի տաճար է:Մեր թատրոնի ավելի քան 2000-ամյա պատմությունը վկայում է , որ մենք խնամքով ենք պահում այդ տաճարը: Այն մեզ համար ազգային մշակութային արժեք է, մեր խոսուն այցեքարտերից մեկը՝ արտաքին առաջ արժանացել է Թատերական գործիչների միության «Արտավազդ» մրցանակին: Երվանդ Ղազանչյանը ներկաների անունից շնորհակալություն հայտնելով ԱԺ նախագահին՝ նշեց, որ նրա հոգատար վերաբերմունքն իրենք զգացել են միշտ:

ԱԺ Պատվո մեդալի է արժանացել նաեւ Սոս Սարգսյանը, որն առողջական խնդիրների պատճառով ներկա չէր պարգեւատրման արարողությանը:

Պարգեւատրման արարողությանը ներկա էին ԱԺ փոխնախագահներ Էդուարդ Շարմազանովն ու Հերմինե Նաղդալյանը, խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահներ, պատգամավորներ, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Հովիկ Աբրահամյանը երեկ այցելեց ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանին եւ հանձնեց նրան շնորհված ԱԺ Պատվո մեդալը:

«Պետությունը ձեռքերը լվանո՞ւմ է Գյումրու անօթեւանության խնդրից»

1-ին էջից

Ընդամենը էլ կարեւորվելու է ծրագրերի համաֆինանսավորման (նաեւ համայնքային բյուջեից հատկացումների) սկզբունքով իրականացումը՝ փուլային եւ տարածքային մոտեցումների կիրառմամբ...

Պետությունը ձեռքերը լվանում եւ մի կո՞ղմ է քաշվում Գյումրու անօթեւանության խնդրից: Սա «Շիրակ կենտրոնի» հարցադրումն է, որի գնահատմամբ՝ նախարարի պատասխանում գրեթե նոր բան չի ասվում, բայց այս անգամ առավել բաց տեքստով հայտարարվում է, թե Գյումրու ժամանակավոր կացարաններում ու վագոն- տնակներում մի կերպ պատսպարված հազարավոր անօթեւան ընտանիքները պետության վրա հույս չպետք է դնեն:

Հիշեցնենք, որ 2008 թվականին ՀՀ կառավարությունը պետության կողմից փոխհատուցման պարտավորություն է ստանձնել Գյումրիում երկրաշարժից անօթեւան 4270 ընտանիքների հանդեպ: Նրանց համար իրականացված բնակարանաշինության ծրագրով 2010 թվականին շահագործման է հանձնվել 1056, իսկ 2012-ին՝ 1756 բնակարան, եւս 420 բնակարան խոստացել են հանձնել այս տարի: Մնում է եւս 1038 ընտանիք, որոնցից, ըստ «Շիրակ կենտրոնի», 3-4 հարյուրը մերժվել են, մոտ 300-ն էլ տարբեր պատճառներով փաստաթղթեր չեն հանձնել սահմանված ժամկետներում:

Համառորեն ուշադրության չի արժանանում նաեւ Գյումրիում երրորդ-չորրորդ աստիճանի վթարայնություն ունեցող 88 վթարային բազմաբնակարան շենքերի ու նրանց բնակիչների խնդիրը, այդ շենքերի բնակիչներին նաեւ չի տրվել երկրաշարժի հետեւանքով անօթեւանի կարգավիճակ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության 27.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: